

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ


ՂՈՒՐԱՆԸ ՀԱՅՈՑ ՄԵԶ

41023

Ա. Կ. ԿՈՇՍՈՅԱՆ

ԴՈՒՐԱՆԸ ՎԱՅՈՅ ՄԵՋ

41023



ԵՐԵՎԱՆ - 2003

ՀՏԴ 297.18
ԳՄԴ 86.38
Կ - 636

Տպագրվում է

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ:

Կ - 636 Կոզմոլոգիա Ա. Կ.

Ղուրանը հայոց մեջ: -Եր.: «Մուղնի», 2003,-
64 էջ:

Իսլամի Սուրբ գիրքը՝ Ղուրանը, միշտ եղել է հայ
կրոնա-քաղաքական եւ մշակութային հետաքրքրու-
թյունների ծիրում: Այդ խնդիրների վերլուծության հա-
մատեքստում արեւելագետ Ա. Կոզմոլոգիան կյանք տվեց
Վ.Դավթյանի գործում մնացած թարգմանությունը:



ԳՄԴ 86.38

© Վահագն Դավթյան

ISBN 99941-33-06-3 • ՄՈՒՂՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ



1994թ. մույս ու ցուրտ ձմեռն էր: Վա-
հագն Դավթյանը նստած էր սեղա-
նի առջև: Լամպի լույսը եւ վառարանում բոցկլտացող
կրակը հաճելի տրամադրություն էին ստեղծում, սա-
կայն վարպետը վհատ էր, անտրամադիր եւ վատա-
ռոդջ: Ինձ որպես գաղտնիք հայտնեց, որ մի շնչով,
մի քանի օրում է թարգմանել Ռուդարի պոեզիայի
ընտրանին, որ երկար ամիսներ դրված էր իր սեղա-
նին: Ես զարմացած, շփոթված, արագ-արագ թերթում
էի էջերը եւ ամեն տողի հետ հավաստիանում, որ ինձ
բախտ է վիճակվել առաջինը տեսնելու հայ թարգմա-
նական արվեստի լավագույն մուշկներից մեկը, որը
ժամանակի մեջ բյուրեղանալով՝ կլրացնի դասականե-
րի շարքը:

Վահագն Դավթյան երեսույթի լավագույն դրսե-
րումներից մեկը նրա թարգմանական գործունեությունն
էր: Նրան տրված էր տարբեր քաղաքակրթություննե-
րի գիտակցման եւ ճշմարիտ արժեւորման շնորհ: Իս-
կապես, զարմանալի երեսույթ է «տաղանդ» կոչված
հասկացությունը: Այն չունի որոշակի սահմանում,

ավելին՝ այն իրացիոնալ է եւ նրանում ձեւավորվող ստեղծագործ ներշնչումը չի ենթարկվում վերլուծության: «Օժտվածների» մասնակցությունն այդ ամենին տվալստանքի եւ որոնումների պահն է միայն, որին հաջորդում է առեղծվածայինը՝ արվեստի գործի ծնունդը, երեւոյթ, որի իմացաբանության առջեւ բոլորը հուսահատ տարածում են ձեռքերը:

Դեռեւս 1990-թ Վ.Դավթյանը հայ ընթերցողին էր ներկայացրել Խաղանիի քաղականների մի ընտրանի, հեղինակ, որից մի քանի նմուշ անկրկնելի վարպետությամբ թարգմանել էր Հ. Թումանյանը: Իրանական պոեզիայի հետ անմիջական մերձեցումն ունեցավ իր դերը, եւ շուտով Վահագն Դավթյանը ձեռնամուխ եղավ իսլամական արձակի կոթողներից մեկի՝ Ղուրանի թարգմանությանը:

Նոր չէ հայերի ճանաչողական հետաքրքրությունը մահմեդական աշխարհի նկատմամբ եւ անդրադարձը նրա Սուրբ գրքին: Դարերի ընթացքում այն թարգմանվել է եւ ամբողջությամբ, եւ հատվածաբար: Վերջինիս քանակն ավելացավ բանաստեղծ Վահագն Դավթյանի սույն թարգմանությամբ: Նա հասցրեց թարգմանել ընդամենը 120 այսաթ¹ առաջին երկու սուրաններից², որի ձեռագիրը վստահաբար մեզ հանձնեց բանաստեղծի դուստրը՝ Հասմիկ Դավթյանը:

Տեքստի սկզբնական մասը վարպետը շարադրել է իր «ձեռամբ», որոշ մաս՝ թելադրված է նրա կողմից, արդեն վատառողջ վիճակում: Կարծում ենք, ընթերցողն էլ կզգա հատկապես սկզբի հատվածների պաթետիկ, ներշնչուն, հատու ոճը, դրամատիկ հոեւորականությունը, հատկապես՝ ներքին հանգն ու ներդաշ-

¹ Բառացի՝ նախանշանակ, հայ մատենագրության մեջ ավանդաբար՝ ոտանավոր:

² Սուրա՝ գլուխ:

նակությունը, իսկ ողջ տեքստում՝ հայոց լեզվի հարստությունն ու հմայքը:

Հայ մշակույթի համար արժեք է ներկայացնում արվեստի հետ առնչվող այն ամենը, ինչ դուրս է եկել Վահագն Դավթյանի գրչի տակից: Այդ է պատճառը, որ մենք, «Ղուրանը հայոց մեջ» քննությունը նվիրում ենք Վահագն Դավթյանի հիշատակին՝ նրա թարգմանության վերջին բեկորը իրական համատեքստի մեջ հնչեցնելու համար, հուսով, առավել ճանաչելի դարձնել հայ ժողովրդի մերձավոր հարեանների Սուրբ գիրքը, դուզն-ինչ նպաստ բերել երկու «Բաղաքակրթությունների երկխոսությանը»:



ԴՈՒՐԱՆԸ ԼԱՅՈՑ ՄԵՉ



Իսլամը համաշխարհային կրոններից մեկն է, որը ձևավորվել է Կայացել է 7-րդ դ., Արաբական թերակղզում, տոհմացեղային հասարակարգի փլուզման շեմին: Այն ուղեկցել է միջնադարյան հասարակարգի զարգացման ընթացքը, պատմությունն ու շրջանը եւ այսօր մեզ է ներկայանում ոչ միայն որպես ազդեցիկ գաղափարախոսություն, այլ նաեւ՝ առաջատար քաղաքական ուժ:

Իսլամական գործոնի վերընթացն այսօր խորհուրդ տեղի է տալիս եւ ստիպում առավել խոր ճանաչել այդ հզոր կրոնն ու քաղաքակրթությունն իր բազմաթիվ դրսևորումներով: Իսլամի ի սկզբանե «ունիվերսալ» բնույթը, որ նրան դարեր շարունակ հեռու է պահել ազգային ներփակությունից, այսօր երբեմն ազգայնամոլական երանգ է ստանում, երբ նրա դրույթները մեկնաբանվում են կամայական, ոչ համարժեք: Իսլամի այդօրինակ «մոդեռնիզացիան» հանգեցնում է տարբեր քաղաքակրթությունների ոչ թե մերձեցմանը, այլ՝ օտարմանը: Այդ է պատճառը, որ վերջին տասնամյակներում արեւելագիտության մեջ հրատապ են դառնում եւ պատշաճ ուշադրության արժանանում ե՛ւ իսլամական աշխարհի ժամանակակից խնդիրներն ու սոցիալ-պատմական տեղաշարժերը, ե՛ւ դասական ժառանգության թարգմանություններն ու նրանց նվիրված ուսումնասիրությունները:



Ղուրանը³ ստեղծվել է Արաբիայում՝ երկիր, որ 7-րդ դարում կրոնների՝ Հուդայականության, քրիստոնեության, զրադաշտականության, մանիքեության, հեթանոս (պոլիթեիստ) արարների հավատքների խառնարան էր։ Այն, ժամանակի առումով զարմանալի արագությամբ դարձավ մոնոթեիստական նոր կրոնի՝ Իսլամի օրրան։ Արաբական ցեղերը, որ ապրում էին Արաբիայի անծայրածիր տարածքներում՝ «ազատ եւ ինքնագլուխ», սոցիալ-պատմական, երբեմն կենսական գործոնների թելադրանքով պառակտված էին, անմիաբան եւ նույնիսկ՝ թշնամի։ Այլ կերպ ասած՝ 7-րդ դ. Արաբիան մեզ է ներկայանում որպես քայքայվող տոհմացեղային մի հասարակություն։ Այնտեղ բնակվող բազմաթիվ ցեղերից մեկը Կուրեյջ ցեղն էր⁴, որի Հաշեմի սնանկացած տոհմիկ ընտանիքում 570 թ. ծնվեց Ղուրանի եւ Իսլամի ստեղծողը՝ Մուհամադ Իբն Աբդալլահը (Մուհամադ՝ որդի Աբդալլահի)։

Մեքքան, ուր ծնվեց Մուհամադը, Արաբական

³ Բառի արարներն արտասանությունը ավելի մոտ է «Կուրան»-ին, սակայն մենք որոշեցինք հետեւել հայ մատենագրության մեջ ամրացած Ղուրան ավանդական ձեւին։ Հետաքրքիր է, որ Թովմա Արծրունին օգտագործել է Կուրան ձեւը. «Եւ զայս ամենայն հաստատեալ եղ ազգի իրում, կոչելով Կուրանս...» Թովմայի Վարդապետի Արծրունիյո պատմութիւն Տաւն Արծրունեաց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 103։

⁴ Կուրեյջ ցեղանվան բազմաթիվ ստուգաբանություններ կան, որոնցից մեկը՝ այն ձուլն է (կուրշ), որ կուլ է տալիս մյուսներին։ Տեւ՝ Իսլամը հայ մատենագրության մեջ, ուսումնասիրեց եւ հրատարակեց Բաբգեն եպս. Կիլիկեւերեան, Վիեննա 1930, էջ 195։ Ըստ պաճապանված ավանդությունների, Կուրեյջիները Մեքքան «նվաճել էին» շատ վաղուց, այնտեղից դուրս մղելով այլ ցեղերի։ Կուրեյջիները «կիսավաչկատուն», «կիսաավազակ» էին, որ Մեքքայի շրջակայքում քոչվոր կյանք էին վարում եւ ապրուստ էին հայթայթում՝ վարձով տալով իրենց ուղտերը եւ ուղեկցելով քարավանները (հմմտ.՝ А. Массэ, Ислам, М., 1982, էջ 27)։



թերակգու Հեջազի նահանգի կենտրոնական քաղաքն էր, տարածված Չամգամ կոչվող աղբյուրի շրջանում։ Առավել խոստուն նկարագրել այն, քան ոռոս արեւելագետ Ի. Պետրուշևսկին, դժվար է։ «Մեքքան գտնվում էր լերկ, անբերրի եւ տխուր մի վայրում»⁵։ Սակայն այդ «տխուր» եւ «անբերրի» վայրը 7-րդ դարում արդեն Արաբիայի արեւմտյան մասում մայրաքաղաքի դեր էր կատարում։ Այն առեւտրի, մանր արհեստավորական ապրանքների արտադրության, մեծ տոնավաճառների եւ ուխտագնացության կենտրոն էր, քանի որ այնտեղ էր գտնվում հեթանոս արարների կուռքերի սրբատեղին՝ Քաաբան⁶։ Մեքքայում էին հանգուցվում հարեւան Իրանի, Հնդկաստանի, Պաղեստինի, Ջինաստանի, Եմենի քարավանային ճանապարհները, ինչպես նաեւ՝ Միջերկրականի ափամերձ երկրների տարանցիկ ուղիները։ Քաղաքի նկարագիրը իր ողջ կոլորիտով լիարժեք է դարձնում նաեւ այն զարմանահրաշ, թանկարժեք ապրանքների մուտքն ու ելքը, որ տեղափոխում էին քարավանները. «...կաշիներ, թանկարժեք մետաղներ, հուտավետ յուղեր, ոսկեբեր ավազ, աֆրիկյան փղոսկր, զենք, ցորեն, ձեթ, չինական մետաքս, ինչպես նաեւ՝ սեւամորթ ստրուկներ՝ եթովպիայից»⁷։

Մուհամադի պապը՝ Աբու ալ Մուտալիբը, հավատավոր մի մարդ էր, Մեքքայի տաճարի նվիրյալներից մեկը, որի խնամակալությամբ (իսկ հետագայում՝ Հորեղոր) նա մեծացավ, վեց տարեկանում որբանալուց հետո։ Մուհամադի էություն մեջ խոր հավատափորության եւ հուզավառության (exaltatio) երեւույ-

⁵ И. П. Петрушевский, Ислам в Иране в 7-15 веках, Л., 1966, էջ 8.

⁶ Քաաբայի «Սեւ քարի» վրա հետագայում բարձրացավ մահմեդական մզկիթի համալիր, որը սրբատեղի է։

⁷ Հմմտ.՝ А. Массэ, նշվ. աշխ. էջ 25։



Թի տրամաբանությունը կապվել է նաեւ Քաարայի տաճարի հետ մանկուց ի վեր ունեցած նրա անմիջական առնչությունը:

Մուհամադի կենսագրություն⁸ այդ հատվածի հավաստի արտացոլումը Ղուրանի 93-րդ սուրան է, որը երբեք չի չընանցվում հետազոտողների կողմից: Ավելին, նրա վարքը իսլամական հոգեւոր մշակույթի անքակտելի մասն է կազմում:

5. Շուտով քո Տէրը քեզ կը տայ եւ դու գոհ կը լինես:

6. Մի՞թէ նա քեզ որը չը գտաւ եւ պատսպարեց:

7. Իսկ քեզ մոլորւած գտաւ եւ առաջնորդեց:

⁸ Մուհամադի վարքի (սիրա) հավաստի աղբյուր է համարվում Իբն Իսհաղի (8-րդ դ.) «Վարք Մարգարեի» գործը, որն ավելի ուշ՝ 9-րդ դ. «խմբագրել է» Իբն Հիշամը: Վերջինս «գիտում է ուսյալ մարդ էր՝ Բասրայից»: Հայտնի է, որ հետագայում, այլոց կողմից հայտնաբերված այդ երկու տեքստերի տարբերությունը մա համաձայն չի ներառել իր գործի մեջ, երկյուղելով, որ դա կխաթարի Մարգարեի անբասիր հեղինակությունը: (Տես՝ As Sira an Nabayia La Ebn Hisham, Kair, 1, 224, նաեւ՝ Islamic Desk Reference, Compiled from The Encyclopaedia of Islam by E. Van Donzel, Leiden-New York-Koln 1994, էջ 150: (Մուսլիմ վարքի բնագրի մեզ հետաքրքրող հատվածների թարգմանությանը սիրով ընդառաջեց արաբագետ, պ.գ.թ. Ա. Փաշայանը): Միջնադարյան մահմադարյան վերաշարադրանքներում կա ցավալի իրողություն: Արդյունքը՝ ժամանակին եւ հատկապես՝ սոցիալ-քաղաքական համատեքստին հարմարեցված կտրուղ, կամ անձ, որ հետոնում է իրականությունից: Այդ է պատճառը, որ հետազոտողները դիմում են մրանց ժառանգությանը, կենսագրական թելուգ ըողարկված մի ակնարկ կամ հիշատակություն հայտնաբերելու: Այստեղ էլ հաճախ համոզվում են մուսլիմ երեւոյթին: Դրանից ելնելով, վերջին տասնամյակների հատկապես արեւմտյան հետազոտողները հարցականի տակ են դնում Ղուրանի մեկնությունների (exegesis) պատմական ավանդույթը: Արաբագետ Ե. Ռեզվանը իր հույժ ժամանակակից, փաստերով ու վերլուծություններով հոգեցած ուսումնասիրության մեջ առաջնային է համարում տեքստերի հետ աշխատելու մոր մեթոդների մշակումը, անկախ աղբյուրների անհրաժեշտությունը: Տես՝ E. A. Резван. Коран и его мир. СПб, 2001. с. 40. Տես նաեւ՝ Ф. А. Абдуллаева, Персидская кораническая экзегетика, Тексты, переводы, комментарии, СПб, 2000.



8. Եւ քեզ գտավ աղքատ եւ հարստացրեց:

9. Դու էլ որբին մի անարգի՛ր:


10. Մուրացողին էլ դուրս մի՛ անիր...⁹

Մինչեւ 24-25 տարեկան դառնալը Մուհամադի կյանքը չի նշանավորվել արժանահիշատակ դեպքերով: Փոքր հասակում հովվություն է արել, հետագայում՝ ուղեկցել առեւտրական մեծ քարավաններ: Իր աղնիվ վարքով, բարեսեւ արտաքինով շահել է հարուստ մի այրու՝ Նադիջի համակրանքը եւ շուտով ամուսնացել է քառասնամյա վաճառականուհու հետ, իմաստավորելով իր տաղտուկ կյանքը: Նադիջի ունեցել է աղջիկներ, որոնցից մեկը՝ Ֆաթիման, հետագայում դարձել է Մուհամադի նվիրյալի, Իսլամում շիա ուղղության ստեղծողի՝ Ալիի կինը:

Վարքագիրները հավաստում են, որ դեռեւս մանկուց Մուհամադին ծանոթ էր տեսողական եւ լսողական տեսիլքը:¹⁰ Սակայն այն, ինչ կատարվեց Ռամա-

⁹ Ղուրան, թարգմ. Ա. Ամիրխանեանց, Վառնա, 1909, 93, 5-10:

¹⁰ Երեւոյթի հոգեֆիզիկական (ընկնալորություն) կողմը բազմաթիվ ուսումնասիրությունների նյութ է դարձել: Ի մի բերելով ուսական եւ արեւմտյան մասնագետների քննության արդյունքները այդ խնդրի վերաբերյալ՝ Ե. Ռեզվանը մասնավորապես եզրակացնում է, որ այն առավելապես գալիս է միջնադարյան քրիստոնեական աշխարհի կողմից «կեղծ մարգարեի» նկատմամբ ունեցած բացասական վերաբերմունքից, ինչպես նաեւ՝ ժամանակի բժշկական հոգեբանության անկատարությունից: Ռեզվանը գրում է. «Մուհամադի մարգարեական հայտնության պատմությանը չի կարելի կցել հիվանդագին վիճակների տեսությունը, բացի դրանից, լայն համատեքստում գիտակցվել է Մուհամադի մարգարեական հայտնության հոգեբանական ասպեկտների մուսլիմները հիմնականապես մարգարեների, քրիստոնեական սրբերի, միստիկների եւ 19-րդ դ. կրոնական քարոզիչների... համապատասխան վիճակների հետ»: Տես՝ E. A. Резван, էջ 120: Այդ խնդրին վերաբերող աշխատությունների ցանկ տես՝ E. A. Резван, նշվ. աշխ., գլուխ 4. տես նաեւ՝ М.Б. Пиотровский, Пророческое движение в Аравии 7 в. Сб. Ислам. Религия, Общество, Государство, М. 1984, էջ 21:



զանի ուրբաթ օրվա աղամամութիւն (Լեյլաթ ալ դադր), երբ Մուհամադը սովորականի պես առանձնացած էր Հիրա լեռան անձուկ անկյուններից մեկում, հիմնովին փոխեց ոչ միայն Մուհամադի եւ նրա մտերիմ հարազատների ճակատագիրը, այլեւ քաղաքակրթութեան հետագա ընթացքը: Մուհամադին երեւաց ոգի (հետագայում՝ Գաբրիել-Ջաբրայիլ) եւ մեկնելով պարուրված մի մատյան, ասաց. «Կարդա»¹¹ (կամ՝ ասա բերանացի, արտասանիր, թվերգիր):

Գթած ողորմած Աստուծոյ անունովը:

1. Կարդա քո տիրոջ անունովը, որ ստեղծել է.
2. Որ ստեղծել է մարդս թանձրացած արիւնից.
3. Կարդա, եւ քո Տէրը զթառատ է.
4. Որ սովորեցրել է գրիչովը.
5. Որ սովորեցրել է մարդուս այն, որ չըգիտէր:¹²

Հետագայում՝ Ղուրանի երկրորդ սուրայում մենք կարդում ենք.

«Ասա նրանց, ովքեր Գաբրիելի թշնամիներն են դարձել՝ նա Ալլահի կամքով իջեցրել է (Ղուրանը-Ա. Կ.) քո սրտի վրա ի հաստատումն այն բանի, ինչ եղել է նրանից առաջ (Հիմ եւ Նոր կտակարաններ Ա. Կ.) որպէս ցուցում եւ ավետիք հավատացյալների»:¹³

20-րդ դարի հատկապէս վերջին շրջանի Հոգեբանութեան գիտությունը հաստատում է մի ճշմարտություն... երբ մարդիկ խորապէս ամփոփվում են իրենք իրենց մեջ, նրանց մոտ ապշեցուցիչ պարզորոշ տեսիլքներ (hallucinatio) են հայտնվում..., նույնիսկ մի

¹¹ Ղարաա՝ կարդալ, որտեղից՝ Ղուրան: Այստեղ նմանապէս առկա է արաբերէն կ եւ դ հնչյունների վերոնշյալ խնդիրը:

¹² Ղուրան, թարգմ. Ա. Ամիրխանեանց. 96. 1-5:

¹³ Թարգմ. Վահագն Դավթյան, Երեւան. 2003. 2. 91:

բանի ժամվա առանձնությունը կարող է առաջ բերել նկատելի Հոգեկան փոփոխություն...»¹⁴: Եթե այս ամենին ավելացնենք նաեւ միջնադարյան մտածողի կրոնական ներշնչանքը, ի վերուստ տրված Հոգր ինքնասեւեռումը, մոլեռանդ բարեպաշտությունը, խոր հավատամորթությունը եւ Հոգու ու մտքի վարժանքը, ապա հասկանալի կդառնա Մուհամադի այն գերզգայական վիճակը, որի պահերին նա ոգիների միջոցով կամ անմիջականորեն իր քարոզները ստանում էր երկնային ամենաբարձր ատյանից, Հոգեպայծառացման պահերին, հարթման եւ տեսիլքային «հանդիպումների» ժամանակ: Այս էր Ղուրանի երկնառարկության (դոգմա, որը հետագայում լուրջ բանավեճերի նյութ դարձավ), անձեռակերտ լինելու ապացույցը, որտեղ Մուհամադը միայն Մարգարե էր, Ալլահի ընտրյալը:

Սակայն, ինչպէս Աստվածաշունչն է ազդարարում՝ «Ձկա մարգարե իր հայրենիքում»: Մուհամադի առաքելությունը հավատ ընծայեցին միայն նրա մտերիմները եւ հարազատները, որոնք անզոր էին դույզն-ինչ նպաստել այդ նոր վարդապետության կայացմանը: Առաջին իսկ քարոզները թշնամաբար ընդունվեցին ճանաչված մեքքացիների, հատկապէս՝ Կուրեյշ ցեղի ազդեցիկ «առետրաֆինանսական խմբիչխանատների» կողմից: Նրա կյանքին վտանգ էր սպառնում, եւ եթե Մուհամադը չսպանվեց, ապա իր կյանքով պարտական էր արաբների մեջ վաղուց ի վեր օրենքի ուժ ստացած արյան վրեժին, որը չէր ճանաչում սոցիալական տարբերակում, գործում էր անխնա եւ մի զսպիչ ուժ էր տաքարյուն, արյունոտուշտ եւ երկպառակ ցեղերի համար, որոնք մինչեւ վերջին մո-

¹⁴ Հմմտ՝ Дж. Рэлф Оди, Человек – существо одинокое; биологические корни одиночества в сб. Лабиринты одиночества, М. 1989, էջ 135:



Հիկանն ընդունակ էին ոչնչացնել որեւէ տոհմ: «Այն մարդը, որից երես էր դարձնում նրա տոհմը, դառնում էր օրենքից դուրս...»¹⁵, որ նշանակում էր բացարձակ անպաշտպան: Մուհամադն իր հաշնի Հեղինակավոր տոհմակիցների հովանավորութեան ներքո կարողացավ լքել Մեքքան, որտեղ նրան համարում էին «Կեղծ մարգարե»¹⁶: 622 թ. մի քանի տասնյակ իր համախոհներով փախավ Յասրիբ (Մեդինա), որտեղ նրա ընդունելութեանը մեծապես նպաստեցին նաեւ հրեաները եւ տեղի քրիստոնյաները: Հենց 622 թիվն էլ դարձավ սուրբ թվական՝ Հեջրա (տեղափոխութիւն, արտագաղթ), որը եւ սկիզբ դրեց մահմեդական աշխարհի թվագրութեանը:

Իրերի հետագա ընթացքը պատմութեան ընդհանուր հենքի վրա կարելի է ուղղակի գլխապտույտ հաջողութիւն համարել: Քարավանային հիմնական ճանապարհների խաղաղութիւնը պահպանվում էր հարուստ եւ հեղինակավոր տոհմերի «հսկողութեան» ներքո, ինչպես նաեւ՝ ամրագրվում էր դաշնագրերով եւ պայմանագրերով: Մեդինայում Մուհամադի շուրջը համախմբված նորադավան մահմեդականների ուխտադրուժ հարձակումները ճամփաբաժաններում Մեքքայի քարավանների վրա եւ հաղթանակները, ապահովեցին Մուհամադի «բանակի» արագ աճը, եւ Մուհամադի թշնամի Կուրեյշիները կանգնեցին երկրորդական աստիճանի: Հազիվ թե կասկած հարուցի այն միտքը, որ Իսլամը (արաբ.՝ հնազանդութիւն) իր օրհանում արդեն՝ միայն վարդապետութիւն էլ էր, այլ նաեւ՝ ռազմական ուժ էր: Հաղթանակներն ուղեկցվեցին արյունահեղութեամբ, որն էլ հիմք դրեց հետա-

¹⁵ В.В. Бартольд, Сочинения, том 6, М., 1966, էջ 89:

¹⁶ Ի դեպ, ավելի վաղ՝ քան քրիստոնեական աշխարհում:

դայում «պայքար հավատի համար» (ջիհադ) պատվիրանի կայացմանը:

Առաջին հարձակումներից ստացած ավարն այն չարժիչ ուժն էր, այն նախադեպը, որ մեծապես որոշեց Իսլամի հետագա ճակատագիրը: Ավարը (այդ թվում գերիներ) բաժանվում էր բոլորի միջեւ, մի մասը՝ տուրքի եւ հարկի ձեւ ստացած եւ օրինականացված, «բարեբաշխվում էր» կարիքավորներին (զաքաթ), իսկ 1/5-ը՝ Մուհամեդին: Իսլամի «սոցիալական հենակետը» դեռեւս մնում էր անկարողների, խեղճների, հնազանդների եւ չունեւորների խավը: Երբ 12 դար անց Ֆ. Նիցշեն անխնա քննադատում էր ամեն քրիստոնեականում հենց խեղճութիւնն ու թուլութիւնը, անօգնականութիւնն ու հնազանդութիւնը, ապա նա չէր ուզում ճանաչել վաղ Իսլամը: Նրա նիհիլիստական փիլիսոփայութիւնից ծնունդ առած ուժեղ մարդու գաղափարին առավել համապատասխանում էր ուշ Իսլամը. «Իսլամն արհամարհում է քրիստոնեութիւնը եւ իրավունք ունի, 1000 անգամ իրավունք ունի. իսլամին հարկավոր են տղամարդիկ...»¹⁷:


630 թ. Մուհամադը իր բանակով մտավ Մեքքա, կործանեց Քաաբայի կուռքերը, սկիզբ դնելով նոր դարազրկի: Երկու տարի անց, 632-ին մահկանացուն կնքեց Մեդինայում, իր ետեւից թողնելով 9 կին եւ ոչ մի արու զավակ: Բազմիմաստ է Ռեզվանի այն միտքը, թե «Կապը երկնքի հետ կտրվեց. քարոզները սկսում էին իրենց ինքնուրույն կյանքը»:¹⁸

Չուրանով սկիզբ դրված նոր գաղափարախոսութեան թանձրույթը (quinta essentia) միաստվա-

¹⁷ Фридрих Ницше, Антихристианство, Опыт критики христианства, в сб.

Сумерки богов. М. 1990, էջ 89:

¹⁸ Sten' E. A. Резван, Գշվ. աշխ. էջ 33:



ծության գաղափարն էր՝ «Ձկա Աստված բացի Ալլահից, եւ Մուհամադը նրա մարգարեն է»¹⁹։ Դար ալ իսլամ (իսլամական տուն) հասկացությունը մուտք գործեց ոչ միայն հարեւան, այլեւ՝ հեռավոր Եվրոպայի ժողովուրդների կյանք։ Ղուրանը դարձավ պատմություն, կրոն, իրավունք, բարոյականություն, մշակույթ, ծես, մի խոսքով՝ իսլամական քաղաքակրթություն։ Այդ քարոզներն էին, որ Արաբիայի արեւահար ժողովուրդին դրեցին նվաճող ժողովուրդների շարքը, նրա լեզուն վերադասեցին վաղուց քաղաքակիրթ ժողովուրդների լեզվից եւ կրոնը դարձրին համաշխարհային կրոններից մեկը։

7-8-րդ դդ. արդեն «Արաբական խալիֆայություն» կոչվող պետությունը հիմնականում ձեւավորել էր իր աշխարհագրությունը՝ Մերձավոր եւ Միջին արեւելք, Հյուսիսային Աֆրիկա, Եվրոպայի հարավ-արեւմուտք։ Նրանց հաղթարշավը կանգ առավ Ֆրանսիայի մատույցներում՝ Պուատիեի մերձակայքում։ Բազմաթիվ երկրների պես իսլամականացման ճնշմանը չդիմացավ նաեւ Իրանը։ 637-ին Քադիսիեի, 642-ին՝ Նեհավենդի ճակատամարտերից հետո պարզ դարձավ, որ Սասանյան Իրանը փակում է իր հին քաղաքակրթության պատմության էջը։ «Հազկերտը, նվաճողներից փախավ Խորասան, ինչպես վերջին Դարեհը հազար տարի առաջ եւ նրա նման էլ սպանվեց իր կողմնակիցների ձեռքով»²⁰։

Իրավամբ, անքննելի են աստծո գործերը։ Երբ 451- ին Սասանյան Իրանը կոտորում էր հայերի կամքը դրադաշտական կրոնը հայոց մեջ հաստատելու համար, ժամանակի անիվը արդեն պտտվում էր նրա դեմ։

¹⁹ Այդ բանաձեռն կոչվում է «Շահադա»։

²⁰ Հմմտ՝ Րիչարդ Ֆրայ, Наследие Ирана, М. 1972, էջ 328։

Մուհամադի ծննդին մնացել էր ընդամենը 119 տարի։


7-րդ դարի 40-ական թթ. արաբները ներխուժեցին Հայաստան։ Ձենք կարող չհիշատակել 9-րդ դարի պատմիչ **Թեֆնուցի** այն խոսքերը, թե՝ «... կործանվեց Պարսից չար թագավորությունը եւ նրան փոխարինեց այլ, շատ ավելի չար՝ իսմայիլականը»²¹։

Դժվար է միանշանակ բացատրություն տալ այն երևույթին, որ արաբական խալիֆայության կազմում հայերը մյուս բազմաթիվ ժողովուրդների պես չընդունեցին իսլամը։ Վերագրել դա ազգային հոգեկան կերտվածքին կամ հայոց կրոնական, քաղաքական, էսթետիկական գիտակցության մեջ քրիստոնեության ամուր արմատների՝, գուցե նաեւ արաբական պետության կազմում ծայրամասային լինելու հանգամանքին, 7- րդ դարում հայոց մեջ ամուր թագավորության եւ պետական ռազմավարության բացակայությանը, հոգեւոր իշխանության առաջատար դերին կամ այս ամենը միասին, այնուհանդերձ՝ հայերը հավատափոխ չեղան։

«Հայաստանը փաստորեն անսպաշտպան էր։ Կայսրությունը (Բյուզանդական-Ա. Կ.) ոչ միայն երկիրը չէր պաշտպանում արաբներից, այլեւ զրգոում էր կրոնական բանավեճերը»²²։ Այդօրինակ կրոնական ներհակության մի զավեշտական օրինակ կարող է ծառայել (ավելի ուշ չրջանի) հետեւյալ երկխոսությունը. «Եվ հոռոմն ասէ հպարտութեամբ թէ ես եմ ազգ առաջին, սուրբ եւ գիտնական եւ ուղիղ հավատ, եւ

²¹ «Թե որպէս քարձումն չար թագաւորութեանն Պարսից, եւ փոխանորդեաց միւս եւս չար իսմայէլականն». տե՛ս՝ Թովմայի վարդապետի Արծրունիոյ պատմութիւն Տաճն Արծրունեաց, Ս. Պետերբուրգ, 1887, գլուխ Դ. էջ 98, թրգմ. ըստ՝ Товма Арцруни и Аноним, История дома Арцруни. Пер. с древнеармянского, вступит. статья и комм. М. О. Дарбинян-Меликян, Ереван, 2001, էջ 148։

²² А. Н. Тер-Гевондян, Армения и Арабский халифат, Ереван, 1977, էջ 35։



Հայն եւ Ասորին ոչ են ի կարգս քրիստոնեութեան եւ ոչ ունին առ Աստուած բաժին, եւ այսպէս նախատէ եւ ՀայՀոյէ: Իսկ ասորին ասէ ծածուկ նենգութեամբ եւ կեղծաւորութեամբ, թէ ես եմ ընտիր քրիստոնեայ եւ ունիմ անարատ Հաւատ եւ սուրբ կարգ, եւ Հոռոմն ու Հայն լցեալ են չար Հերձուածաք աւտար են յԱստուծոյ եւ զՅիսուս Քրիստոս ոչ ճանաչեն եւ զԺոխոց են ժառանգ»: ²³ Հիրավի, քրիստոնեութեան անհանգիստ ընդերքում բորբոքվող կրքերը ստիպում էին կողմերին առավել ճկուն վարել ամենանուրբ աստվածաբանական քննարկումները: Մինչ արարները թրով նվաճում էին իրենց անձանոթ աշխարհները, Հայերը թրծվում էին դավանաբանական բանավեճերի արվեստում: Այսպիսով, 7-րդ դարից սկսած՝ Քրիստոնեական Հայաստանը կանգնած էր եւ՛ նվաճողի, եւ՛ հզոր մի գաղափարախոսութեան դեմ-հանդիման, որին դիմադրելու համար հարկավոր էր ճանաչել այն: Արարներն այնքան էին զբաղված զավթողական եւ ավարառու նկրտումներով, որ ժամանակ չունեին հմտանալու հակաճառութեան արվեստում եւ Հիմնավորելու սեփական վարդապետութեան գրույթները: Սակայն, երբ ուղղակիորեն նույն պետական «գլխարկի» տակ առնչվեցին իրեն վաղուց տեսականորեն հաստատած քրիստոնեական ջատագովութեան հետ, ստիպված էին տեղի տալ եւ Ղուրանի դոգմաները պաշտպանելու համար յուրացնել նաեւ բանավեճի արվեստը:

Հայ պատմիչ Սեբեոսի (7-րդ դ.) անվրդով տեղեկությունը Մուհամադի մասին, առաջինն է Հայ մատենագրության մեջ, որը մի կողմից պատմական փաստն է արձանագրում, մյուս կողմից՝ ընդգծում է

²³ Յ.Ս. Անասեան, Մանր երկեր, Լոս Անջելես, 1987, էջ 211:

խլամի նկատմամբ զուսպ, ավելին՝ անտարբեր վերաբերմունքը: Դա արդյունք էր նախ՝ իսլամի միաստվածական գաղափարի հետ քրիստոնեական մտքի ընդհանրություն, ինչպես նաեւ՝ Մուհամադի քարոզներում այլազավանների նկատմամբ ունեցած հանդուրժողականություն: Ղուրանի կանոնարկումը եւ «կոնֆորմիզացիան», նրանում չեչտադրումների փոփոխությունը տեղի ունեցան ավելի ուշ, Մուհամադի մահից հետո: Սեբեոսը գրում է. «Այդ ժամանակ երեսան եկավ մի մարդ, այդ նույն Իսմայիլի որդին՝ Իբրի, որի անունն էր Մահմեդ, առեւտրական եւ իբրեւ թե աստծո հրամանով, սկսեց քարոզել, որ ճշմարիտ ճանապարհը դա Աբրահամյան աստծո ընդունումն է: Եվ մանավանդ հմուտ եւ տեղյակ էր Մովսիսական պատմությունը: Քանի որ հրամանը ի վերուստ էր, ապա բոլորը, որպես միասնական հրամանով, միաբանվում էին այդ նոր ուխտի ներքո, թողնելով սին պաշտամունքները, ընդունում կենդանի աստծուն, որը երեսաց նրանց Աբրահամ հորը: Այսպիսով, Մահմեդը օրենսդրեց չուտել լեշ, չխմել գինի, չխոսել սուտ, չանել պոռնկություն»: ²⁴ Հետագայում, որպես խոսքի եւ գործի հակասություն օրինակ քրիստոնեական միտքն ընդվզում է այդ ամենի դեմ, նշելով Ղուրանի 76-րդ սուրայի 21-րդ այաթը, ուր ասվում է դրախտային ըմպելիքի մասին «...եվ նրանց Տէրը կը խմեցնէ նրանց մաքուր գինի»: ²⁵

Ղուրանի Հայերեն թարգմանությունների ձեռագիր լուսանցագրություններում բացի ուղեցույց Հան-

²⁴ Պատմություն Սեբեոսի, աշխատախրությամբ Գ.Վ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 135, թարգմ. ըստ՝ Ст. Малхасян, История епископа Себеоса, Ереван, 1939, гл. 40.

²⁵ Ղուրան, թարգմ. Ա. Ամիրխանեանց:

²⁶ Մատենադարանի 9350 ձեռագրի (Վաթողիկոսական Դիվանից



դիսացող փաստագրումները²⁶ կան նաև առարկություններ (Վասն սատանայի..., Ավաղ ծիծաղելի օրինակիդ..., խարէութեամբ ձեւանա իրբեւ Մովսէս... եւն²⁷): Կանանց իրավունքներին առնչվող այսօրվան կապակցությունը՝ «Զկնի այսքան ջանի վասն այժմ կանանց գովէ զողջախոհութիւն ծածկելով զիւր վաճառություն որ ԺԳ (13) կանայս ունէր» եւն²⁸: Ի դեպ, Վ. Բարսեղը երկնտանքով այդ Հանգամանքը վերագրում է կամ Մուհամադի մոտ «ուշ արթնացած զգայականությունը», կամ՝ քաղաքական նպատակներին:²⁹

Շուտով Հակաճառությունն ու տարակարծությունը³⁰ մուտք գործեցին կյանքի տարբեր բնագավառներ: Փիլիսոփաները, աստվածաբանները, տրամախոսները բանավիճում էին ապացույցներով, դատողություններով, Հաճախ սոփեստությամբ, պոետները՝ պատկերներով: Բանավեճի, այն էլ բարեկամա-

փոխանցված թերի օրինակ, որ սկսվում է երկրորդ սուրայի 148-րդ ալլախից), համապատասխան պաթեների դիմաց կան այլ ձեռագրով կատարված լուսանցագրություններ՝ «Վասն խոզ չուտելոյն», «վասն կնոջ», «արձակումն կանանց», «վասն այրի կանանց» եւն: Էջերն են 1ա-12ա: Ծնորհակալություն ենք հայտնում Մաշտոցի անվ. Մատենադարանի ձեռագրատան վարիչ, պ.գ.թ. Գ. Տեր-Վարդանյանին, սիրով մեզ օժանդակելու համար:

²⁷ Մատենադարանի 2826 ձեռագիր (նույնական 2968-ի հետ) «Գիրք, որ կոչի Ղուրան», էջ 12ա, 13ա, 13բ, 15ա եւն:

²⁸ Մեսրոպ Զ. Սեթեանց, Հայ ձեռագիր Ղուրան մի ի հնդիկս (թարգմ. Ստեփաննոս վարդապետի իլովեստյ), Բազմավեպ, 1924, էջ 205:

²⁹ Բազմակնությունը թույլ էր տալիս ընդամենը չորս կին: Պատմիչ Ղեոնդը քննադատում է Մուհամադի կողմից ստեղծված, սակայն իր կողմից չպահպանված բարոյական նորմը: Տես Պատմություն Ղեոնդեայ Մեծի վարդապետի հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 92:

³⁰ Քրիստոնեա-իսլամական երկխոսությունների մասին եւ գրակ. ցանկ տես՝ А. В. Журавский, Христианство и ислам, социокультурные проблемы диалога, М. 1990.

կան, Հիանալի մի օրինակ է Գրիգոր Մագիստրոսի եւ Մանուչեի Հայտնի երկխոսությունը պոետիկայի նորությունների վերաբերյալ, որն ավարտվեց Գ. Մագիստրոսի «Հաղարատողեանով»:³¹ Ընդդիմախոսությունն ու Հակաճառությունը մի նոր աստիճանի Հասցրեց Գրիգոր Տաթևացին (14-րդ դ.)՝ համակարգելով այն Նրա Գիրք Հարցմանցի «Ընդդէմ տաճկաց» գլխում մեկ առ մեկ մերժվում են Ղուրանի դրույթները:³² «...Տաթևացին կը գրէ ոչ թե իսլամը անարգելու դիտումով, այլ կրօնական ճշմարտությունը ցայտնայելու եւ զայն Հատազոտելու նպատակով»:³³ Մի օրինակ Տաթևացու Հակաճառությունից բավական է, հասկանալու Համար, որ «Հավատացյալը» պնդում է, իսկ Հակաճառողը՝ մերժում: Երկուսն էլ փաստարկում են եւ ապացուցում: Պիղծ զոհի կամ խոզի մսի արդիւրի կապակցությամբ (Որ զՀալլենս ոչ ուտեն...) Տաթևացին գրում է. «Արդ՝ Հարցանեն՝ զձեզ, ձեռն սուրբ եւ դանակն սուրբ, զի՞նչ է, որ պղծէ զկենդանին»:³⁴ Իրականում այդ արգելքներն ունեն խոր՝ սոցիալական, տնտեսական եւ Հին՝ Հեթանոսական շր-

³¹ Գրիգոր Մագիստրոս, Տաղասացությունը, Վնտ. 1868: Այս օրինակը գրավել է Կյուլեներյանի ուշադրությունը, տես Իսլամը հայ մատենագրության մեջ, ուսումնասիրեց եւ հրատարակեց Բաբգեն Կապ. Կիլեներեան, Վիեննա 1930: Հայոց մեջ իսլամաքրիստոնեական հակաճառությունների մասին տես՝ Мелконян Армен, Армянские средневековые источники об Арабском халифате 7-8 вв. Автореф. канд. дисс. Ереван, 1990.

³² Զումմ մարդ փեղամբար ասեն: Հանապազ ջրով ողողին եւ սրություն համարին: Ուրանան գմարդեղություն բանին: Զգինին հարամ ըմբեն եւն: Տես «Գիրք հարցմանց», Գրիգոր Տաթևացի, Երուսաղեմ, 1993, առաջաբան՝ Ս. Արեւշատյանի, Գրիգոր Տաթևացին եւ նրա «Հարցմանց գիրքը», էջ 51:

³³ տես՝ Բ. Կյուլեներյան, նշվ. աշխ. էջ 11:

³⁴ Նույն տեղում, էջ 178:

³⁵ Այդ մասին տես՝ И. Ш. Шифман, О некоторых установлениях раннего ислама, сб. Ислам, 624. աշխ. էջ 38-40:



ջանի հետ կապված ծիսային արմատները:³⁵ Տաթևացիին Ղուրանի մանրամասներում եւ եզրույթներում հատուկություն եւ գիտելիքներ է ցուցաբերում: Ենթադրվում է, որ նա ճանաչել է Ղուրանը կամ ոչ հայոց լեզվի միջոցով, կամ էլ՝ Ղուրանն առաջին անգամ հայոց լեզվով թարգմանվել է ավելի վաղ:

Ղուրանի մասին խոսում են տարբեր հայ պատմիչներ, հաճախ՝ ի ցույց դնելով իրենց լավատեղյակությունը: Նրանց ծանոթ է, օրինակ, «ղուրա» (ղուրանասաց) մահմեդական տերմինը: Եզրույթների լավ գիտակցություն էր հարկավոր Ղուրանը «Ֆուրկան» անվանելու համար: 13-րդ դ. պատմիչ Վարդանը գիտեր Ղուրանի սուրանները եւ հիշատակում է «Սուրաթ ալ բակարան»: Հավանաբար, մոտավորապես 13-րդ դ., գուցե հատվածաբար, սակայն արդեն գոյություն ունեւ Ղուրանի հայերեն թարգմանությունը:³⁶ Կարծում ենք, մեր պատմիչները կարող էին ծանոթ լինել նաեւ Ղուրանի արաբերեն բնագրին, կամ էլ 12-16-րդ դդ. բաղմիցս իրականացված Ղուրանի լատիներեն թարգմանություններին:

Ինչ վերաբերում է հատվածային թարգմանություններին, ապա դրանք պատահական եւ ինքնապատակ չէին, առավելապես ուղղված էին Ղուրանի որեւէ դրույթի ճանաչմանը, քննությանն ու հակադրությանը:

Հավաստի է Ղուրանի հայերեն թարգմանությունը լատիներենից՝ կատարված Ստեփանոս Լեհացու ձեռքով (17-րդ դ.):³⁷ Նա ծնվել եւ ուսումնառել է Լեհաստանի Լեմբերգ (Լվով) քաղաքում: «Բարեպաշտ


ձեռքաց զավակ էր», լեզուների փայլուն գիտակ: «Մատաթագէմ ընթացքը եւ ընտիր կենցաղավարութիւնը կը զրաւեն էջմիածնեցոց ուշադրութիւնը եւ Փիլիպպոս կաթողիկոս կը ձեռնադրէ զինքը քահանայ եւ քիչ յետոյ կու տայ վարդապետական գաւազանը»³⁸ Լեհացու կողմից կատարված բաղմաթիվ թարգմանությունների մեջ Ղուրանը երեւի միակն է, որ հայ մատենագրության մեջ, բացի հիշատակությունից, ուշադրության եւ գնահատականի առանձնապես չի արժանացել:

Թարգմանությունն ունի 124 սուրա, որոնք իրարից բաժանվում են լատիներեն բնագրին հարազատ «Ազոօօրա» (Azōōra) տառադարձումով: Մեզ չի տրվում մեջ գցեց սուրանների քանակը, որն արաբերեն բնագրում, ինչպես հայտնի է, 114-ն է:³⁹ Պարզվում է, որ այդ անհամապատասխանության աղբյուրը հենց լատիներեն թարգմանությունն է, կատարված 12-րդ դ., որտեղ թարգմանիչն իր նախաձեռնությամբ եւ «թարգմանչի աշխատանքի վերաբերյալ իր պատկերացումներով» միջամտել է բնագրի իր կարծիքով «բարբարոսական» տեքստին:⁴⁰ Ավելի ճիշտ, դա եղել է թարգմանիչների մի խումբը, որում եղել են նաեւ արաբախոսներ: Թարգմանական գործունեության այդօրինակ եղանակը հենց նույն դարերում կիրառվում էր նաեւ հայոց մեջ: Թարգմանությունները

³⁸ Ն. Ակիմեան, Ստեփանոս վրդ. Լեհացի, Համդէս ամսօրեայ, 1912, թիւ 1, էջ 62:

³⁹ Տե՛ս՝ Ղուրանի գիտական թարգմանությունը Коран. Пер. и комм. И. Ю. Крачковского, М. 1986. Коран, Пер. с арабского и комментарий М.-Н. О. Османова, 1992 (վերջինս արաբերեն բնագիր-ձեռագրի ողնկցությամբ):

⁴⁰ Ի. Կետունացու մասնակցությամբ. տե՛ս՝ Е. А. Резван, указ. соч., с. 356. Այդ մասին նաեւ՝ Л. И. Климович, Книга о Коране, М. 1986, էջ 117-119: Նաեւ՝ А. В. Журавский, Աշվ. աշխ. էջ 32:



³⁶ Ղուրանի ամենաերկար՝ 2-րդ սուրան է, որ թարգմանվում է՝ Կովը: Հմմտ. А. Н. Тер-Гевондян, Армения и Арабский халифат, Ереван, 1977, էջ 263:

³⁷ Մատենադարան. ձեռ. 3109 (17 դ.), 934 (18 դ.):

իրականացվում էին օտար եւ հայ հեղինակների համագործակցությամբ, երբ լեզվակիրները կատարում էին բնագրի տողացին, իսկ հայ խմբագիրները՝ դրանց գրական վերամշակումը: Այդ պատճառով հայերեն թարգմանությունները բնագրական տեսակետից երբեմն բավականին հեռանում էին իրենց նախօրինակներից եւ փաստորեն դառնում նրանց ազատ փոխադրությունը:⁴¹

Ղուրանի նշված լատիներեն թարգմանությունը թեեւ անհաջող, այնուհանդերձ 1543 թ. հրատարակվել է Շվեյցարիայում, քրիստոնեական ֆատագոլությունը իրական աղբյուրներից բխեցնելու եւ հիմնավորելու նպատակով: Ղուրանի լատիներեն երկրորդ թարգմանությունը կատարվել է ավելի ուշ, 13-րդ դ., որտեղ Մարկոս Տոլեդացին ֆանացել է հնարավորինս հարազատ մնալ բնագրին, պահպանելով սուրանների վերնագրերը, որոնք բացակայում էին առաջին թարգմանության մեջ: Լատիներեն երրորդ թարգմանությունը հրատարակվել է 16-րդ դ., ուր կրկնվել են առաջին թարգմանության բազմաթիվ անճշտությունները՝ 124 սուրա, բնագրին ոչ համարժեք տեքստ, վերնագրերի բացակայություն, «սղօսարա» տառադարձում են: Լատիներեն ավելի ուշ թարգմանության մեջ արդեն տեսնում ենք «Surat» ձևը:⁴² Ի դեպ, Լեհացին նույնպես թարգմանության տեքստի մեջ չի ներառել սուրանների արարերեն անվանումները եւ դրանց թարգմանությունը: Վերջիններս նշված

են միայն ձեռագրի ցանկում, այն էլ՝ կիսատ:⁴³ Այս ամենի վրա լույս է սփռում Լեհացու թարգմանության վերջում արված այն գրությունը թե՛ «Ի վերջոյ Ղուրանին քանի մի ոտանաւորք եղեալ կան, որք ոչ են թարգմանեալ ի լատինացւոց բարբառ, ոչ գիտեմ զպատճառն»:

Ենթելով այս փաստերից, կարող ենք ենթադրել, որ Լեհացին Ղուրանի հայերեն թարգմանությունը կատարել է իր համար բնագրի ծառայող լատիներեն առաջին թարգմանությունից, պահպանելով նրա կառուցվածքը:⁴⁴ Ի դեպ, հայտնի է, որ Ղուրանի լատիներեն թարգմանությունների մակարդակն անհամեմատ ցածր է Աստվածաշնչական բնագրերի արաբերեն թարգմանություններից, որոնք կատարվում էին քրիստոնյա արարների միջավայրում:⁴⁵

Ահավասիկ Ստեփանոս Լեհացու թարգմանության սկիզբը եւ ավարտը.

«Այս է գիրք օրինաց հազարացւոց կամ իսմայելացւոց որ կոչի Ղուրան, այսինքն հաւաքումն պատւիրանաց»⁴⁶: «Կատարեցաւ Ղուրան, թարգմանեալ ի լատին բարբառոյ ի հայոց լեզու, ձեռամբ Լեհացի Ստեփաննոսի բանասէրի»:

Թարգմանությունը սկսվում է Ղուրանի առաջին սուրայի՝ ՓաթաՀայի⁴⁷ (որ ընդունված է համեմատել «Հայր մերի» հետ) թարգմանության մի քանի տար-

⁴¹ Հմմտ՝ Լեւոն Տեր-Պետրոսյան, Հայ հին թարգմանական գրականություն, Երեւան, 1984, էջ 16:

⁴² Լյուդովիկոս Մարաշիի կողմից, տե՛ս՝ Реваан, Гзѣл, աշխ., Գերդիր 5:

⁴³ 3109 ձեռ. ցանկում առկա է ընդամենը 71 հայատառ արարերեն վերնագիր, հայերեն թարգմանությամբ, իսկ 934 ձեռ. ցանկում՝ 67 անուն վերնագիր (էջ 2ա-4ա), որից հետո 5 դատարկ թերթ կա:

⁴⁴ Այս խնդիրը կարոտ է բնագրերի համեմատական ուսումնասիրության, որը, որքան մեզ հայտնի է, մինչեւ օրս անհարկի դուրս է մնացել մեր արելագետների ուշադրությունից:

⁴⁵ Հմմտ. եւ այդ մասին ցանկ տե՛ս՝ E. A. Резван, էջ 358:

⁴⁶ Մատենադարան, Գշվ. ձեռագրեր:

⁴⁷ Բառացի՝ բացող: Առաջին սուրան է, որ պարունակում է Ղուրանի դոգմաների սեղմ շարադրանքը: Աղոթքի (սալաթ-ճամազ) հիմքն է: Տե՛ս Ислам. Краткий справочник. М, 1983, էջ 109:



բերակով: Առաջինը իր՝ Լեհացու թարգմանությունն է: Մյուսը ներկայացված է որպես «այլ թարգմանություն», որ Հասկանալի չէ, իր կողմից կատարված մեկ ա՛յլ տարբերակ է, թե՞ այլ թարգմանչի գործ է: Իսկ մի երրորդ տարբերակ ներկայացվում է «Այլ թարգմանիչ» վերնագրի տակ: Արդյո՞ք այլ թարգմանիչը լատինական այլ թարգմանիչն է, թե՞ Լեհացուն Հայտնի է եղել նաև Հայոց մի «այլ թարգմանիչ»: Հետաքրքիր են Ղուրանի թարգմանությունն այն ձևագրերը, որոնք նույնական են իրար հետ, սակայն տարբերվում են Լեհացու թարգմանությունից և կառուցվածքով և ոճով⁴⁸: Թարգմանական այդ օրինակներն ունեն 104 սուրա, «Յազագա փղաղ, որ պարունակէ զՀինգ տունա: Գրեալ ի Մաքիոյ»: Սա Համապատասխանում է Ղուրանի բնագրի 105-րդ «Փիղ» սուրային: Տարբերությունը գալիս է նրանից, որ նշված ձևագրերում առաջին՝ Փաթիհա կոչվող սուրան Համարվել է մուսթ և Հաշվի մեջ չի մտել: Եթե Լեհացու թարգմանությունն մեջ սուրանների թիվը ավելի էր, ապա նշված⁴⁹ թարգմանությունն մեջ այն պակասում է իննով: Ճիշտ է, թարգմանությունները մանրադնին քննության կարիք ունեն, սակայն Հենց առաջին ծանոթությունն էլ ի ցույց է դնում դրանց ակնհայտ տարբերությունները: Օրինակ, երկրորդ՝ ամենաներկար սուրան, որ արաբերեն կոչվում է «Ալ-Բակարա», Լե-

հացին թարգմանել է «Կովը», իսկ նշված թարգմանությունն մեջ այդ սուրան կոչվում է «Գլուխ յաղագս երնջին»: Փաթիհայում աչքի է ընկնում Ալլահի յուրօրինակ էպիտետը, որ չենք Հանդիպում այլոց մոտ՝ «Բարեբարեգութ»:

Իսլամի վերաբերյալ Հայոց պատկերացումները միշտ չէ, որ խոր էին և գիտակցված: Դրանցում Հաճախ ընդդիմանալու նպատակը թելադրում էր նաև միջոցները, որոնք են Մուհամադի վարքի մասին անհիմն, ավանդադրուցային և ոչ Հավաստի տեղեկություններ: Ղուրանի թարգմանությունը ներկայացնող նշված ձևագրերում առկա են իսլամին առնչվող այլ տեքստեր: Այդպես էին կազմվում նաև միջնադարյան եվրոպական թարգմանությունները, որոնց կցվում էին ե՛ւ «սարակինոսների կրոնի» հերքումը, ե՛ւ իսլամն արտացոլող դանազան, մեծ մասամբ ոչ գիտական գրվածքներ: Այսպես, վերը նշված ձևագրերում առկա են «Պայմանագիր Մահմետի ընդ Հայոց», «Վարդապետություն Մահմետի», «Տեսիլ Մահմետի», «Ընդդիմադրություն բանից Ղուրանին», «Պատմություն գալստեան Մահմետին ի Հայս» և այլ բնագրեր⁵⁰: Դրանք, որպես կանոն, մեր պատմիչների Համապատասխան Հատվածների վերաշարադրանքն են, որտեղ պատմական տեղեկությունները յուրովի փոխ-

⁴⁸ Մատենադարան, ձեռ. 2826, 2968, 8056 (9350-ր մասնակիորեն պահպանված օրինակ է): 6984 ձեռագրի գրիչը Արիստակես երեց Համադանցին է (18-րդ դ.), կարծում ենք այդ է պատճառը, որ նրա մոտ Ղորան (պարսկ.) ձեռն է պահպանվել, Քալիստակ Քալ մատենագրության մեջ ընդունված՝ Ղուրանի: Սա մասնապես մուսուլման է 8056-ի հետ, առատ է ջնջումներով: Ե՛վ գրչի ձեռքով, ե՛ր այլ միջամտությամբ ունի լուսանցարություններ: Բնագրի էջերն են 8ա-303ա, Պայմանագրի՝ 303բ-305բ:

⁴⁹ Գուցե՝ անանուն:

⁵⁰ Տես՝ Լեհացու՝ 3109 և «այլ թարգմանիչ» 2826, 2968 ձեռ.: Նմանատիպ երևույթ առկա է նաև ռուսաց մեջ, երբ քրիստոնեական բանավիճային գրականությունից քաղված փաստերը նյութ են հանդիսացել Մուհամադի անմի շուրջ ստեղծված բազմաթիվ իրականությունից հեռու և ֆանտաստիկական պատմությունների: Տես Ս. А. Грязневич, Коран в России в сб. Ислам. Религия, Общество, Государство, М, 1984, էջ 76: Տես Դ. Оганесян, Критерии истинности и поэтическое высказывание в средневековой арабо-мусульманской и западно-европейской культурах. Тез. всесоюз. конф. „Семантические и коммуникативные категории текста“, М., 1990.

վում էին, գրական-գեղարվեստական երանգ եւ պատկերավորում ստանում⁵¹։ Ինչ վերաբերում է այդ ձեռագրերում բազմիցս տեղ գտած «Պայմանագրի» տեքստին, ապա վերջինս արար խալիֆ Մուավիին ստորագրությամբ Հայտնի մի թուղթ է, որ արտոնություններ էր տալիս իրեն Հարկատու քրիստոնյաներին⁵²։

Բազմիցս նշվում է Հայոց մեջ Ղուրանի լրիվ եւ Հատվածային թարգմանությունների մասին⁵³։ Մատենադարանի ձեռագրերի բնությունը ցույց տվեց, որ կամ դրանք վերը նշված երկու թարգմանություններն են ու դրանց Հատվածները, կամ էլ թարգմանություն չեն, այլ սեփական գիտելիքների սահմաններում կատարված ինչ-որ վերաշարադրանքներ եւ

⁵¹ Ծեշտվում էր Սարգիս Բաճիրա քրիստոնյայի եւ Սալման պարսիկի ազդեցությունը նրա վարդապետության ձևավորման վրա. վերջինիս օգնությունը Մուհամեդին Ղուրանը ստեղծելու գործում, քանի որ, ինչպես Թովմա Արծրունին է գրում, Մուհամադը... «ոչ գիտեր գիր եւ ոչ դպրութիւն»։ Այդ մասին եւ գրականության ցանկ տես՝ История Анонимного повествователя Псевдо-Шапух Багратуни. Пер. с др. арм., пред. и комм. М.О. Дарбинян-Меликян, Ереван, 1971, էջ 11, 13։

⁵² Տես նաեւ Հ.Ա.Մանեան, Գշվ. աշխ., էջ 627։

⁵³ Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Բ. Ա. Երեւան, 1965, էջ 442։

⁵⁴ Օրինակ՝ 5795 ձեռագրի նկարագրության մեջ Գրիգոր Տաթևացու «Քարոզգիրքը» նկարագրված է՝ «...Բվմդ. ի Ղուրանէն թարգմանեալ. Երրորդութիւն մի աստուած (ժը) դ», տես՝ Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Բ. Ա. Երեւան, 1965։ Իրականում դա թարգմանություն չէ, այլ՝ 18-րդ դ. հավելում (էջ 2բ), ենթադրում ենք, գրքի տիրոջ գրառումն է իր իմացածի չափով, որտեղ թվարկված են Ալլահի էպիտետները, նրա ատրիբուտները եւ այլ արարերն են մերձդուրանյան տերմիններ՝ ռաֆալ-դուտուզ (ռում ալ դոդս՝ Սուրբ հոգի քառակապակցության աղավաղված ձևն է), աքքար, Ալլահ, բեմելա, ռուֆ եւն։ 4307 ձեռագրում, փոխադրողը իր ընտրած սուրաները վերաշարադրում է. ըստ որում, առաջին սուրայի բովանդակությունը չի համապատասխանում ֆաթիհային, այլ մոտ է դրախտի նկարագրությանը, որ բոլորովին այլ սուրայից է։

գնահատականներ⁵⁴։ Հայտնի է դառնում, որ Ղուրանի Հատվածային թարգմանությունների եւ նույնիսկ Համառոտ վերաշարադրանքի երեւոյթը ոչ միայն կիրառելի էր Հայոց մեջ, այլ նաեւ՝ եվրոպայում։ Ղուրանի թարգմանությունների Ղոմի կենտրոնի ուղեցույցում ասվում է, որ Ղուրանը թարգմանվել է ախարհի մոտ 140 լեզուներով, որոնց մոտ 450 օրինակը ներկայացնում են Ղուրանի ամբողջական կամ Հատվածային թարգմանություններ՝ եվրոպական լեզուներով։ Սակայն, ինչպես Հավաստում են կենտրոնի ղուրանագետները, ցավոք, Հազիվ թե գտնվի մի թարգմանություն, որը «Համաթեք է Ղուրանին՝ այդ հավերժ հրաշքին»⁵⁵։

Ղուրանի Հայոց թարգմանությունները արաբերեն բնագրից, ինչպես նաեւ՝ ֆրանսերենից հրատարակվել են Պոլսում (1911թ.) եւ Վառնայում (1909 եւ 1912 թթ.)⁵⁶։ Նշված թարգմանություններից երկուսը ունեն առաջարան։ Որոշ այաթների մեկնաբանության փորձ է արվել, երբեմն ըստ Ղուրանի մեկնիչների, երբեմն՝ ըստ այն թարգմանչի բնություն, որի բնագիրն օգտագործվել է։ Ներկայացված է նաեւ թեմատիկ ցանկ՝ որ կոչվում է «Պատկեր նյութոց»։

1991-ին «Ալ-Բակարա» սուրան (286 այաթ) ըստ Ի.Յ. Կրաչկովսկու գիտական թարգմանության եւ վերը նշված արեւմտահայ թարգմանությունների վե-

⁵⁵ An introduction to the Centre for the Translation of the Qur'an. Attached to the Awqaf and charities organization.

⁵⁶ Տես՝ Մուհամմետ, Գուրան, արաբատառ բնագրին եւ Գազի-միրսեիին. Ամիրխանի եւ այլ հեղինակատր արաբագետներու թարգմանութեանց առաջնորդութեամբ հաշերէնի վերածեց Յակոբ Գուրպեթեան, Վառնա, 1912։ Քուրան, հանդերձ Մուհամմետի կենսագրութեամբ, թրգմ. ֆրանսերէնէ Լեոն Լադենց, Կ.Պոլիս, 1911։ Ա.Ամիրխանեանց, Վառնա 1909։



րաչարադրվել, խմբագրվել և հրատարակվել է արեւելահայերենով:⁵⁷ 1995-ին առաջին երկու սուրաների 120 պաթ թարգմանել է Վահագն Դավթյանը:⁵⁸

Ոոսուն են Ղուրանի ամբողջական թարգմանությունների հրատարակման թվականներն ու վայրերը: Չնայած բազում պատմամշակութային եզրերով, ինչպես նաև՝ այդ երկրներում հանգրվան գտած մեր հայրենակիցների միջոցով կապված ենք իսլամական աշխարհի հետ, այնուհանդերձ, մինչև օրս չունենք իսլամական քաղաքակրթության անկյունաքար հանդիսացող կոթողի գիտական թարգմանություն՝ հազեցած լավագույն էկզեգետների մեկնություններով:

Ամեն ժամանակ ունի իր պահանջները, և ամեն հեղինակ ունի «մեկնարանելու» իր իրավունքը: Ահա Ղուրանի ֆաթիհայի մի քանի նմուշ տարբեր թարգմանիչների մատուցմամբ՝ միջնադարից մինչև մեր օրերը.

⁵⁷ Սուրբ Ղուրան, թրգմ. Գրիգոր Գույումճյանի, Հայաստան-Միջին արևելք (Ռադոն), 1991, 1, էջ 24-32:


⁵⁸ Վահագն Դավթյանը իր գեղարվեստական մտածողության միջով անց է կացրել Ա. Ամիրխանյանի, Գ. Սաբուկովի և Ի. Կրաչկովսկու թարգմանությունները: Ի դեպ, ուսական դուրանագիտության վերջին տարիների ակնհայտ ձեռքբերումների խորքի վրա այսօր բարձր գնահատականի են արժանանում վերջիններիս թարգմանությունները: «Ի.Յ. Կրաչկովսկու թարգմանությունը գերազանցում է ոչ միայն բոլոր ուսական, այլև՝ քաղաքիվ եվրոպական թարգմանությունների»: Ռեզվան Աշվ. աշխ. էջ 443:





(Faint handwritten text in Armenian script)

Հիմարտաբան ամսագրայն Ներքեղածոյ . նախագ
չորհն . Հիմարտաբան ամսագրայն Ներքեղածոյ . նախագ
նկայն յերթեալ ապահովածոյ որին պակասեալուն եւ
յայ հանելուց յառիւծին զողակն . Հիմարտաբան Էրեւնոյ .
Բաշկիր սա իր ինտերպրէտը ի վերջում լեզուներ
նախք մեծացանքն եւ պարտաւ յարգանքաւորայն եւ
ճարտար մեծ լորիս Հիմարտաբան Գաղղ պատմայն .
Եւրոպ թիւ դեռ ըզ գաւառական տղին խորտակ
Գործնական առիւթ ոչինչ տար ի հասարակութիւն
Լաւ տեսած լիւթն եւ զայն Դայն Գաւառ եւ իրարեւոյ
Կործանայն . Զապաւածուն եւ զորին ապահովայն
Թաւրիս եւ Գործնական խորտականքն . եւ այս պատմայն



Մատենադարան, 934 ձեռագիր, էջ 10:

Ստեփանոս Լեհացի

Ողորմածի եւ բարերարի Աստուծոյ
 բնաւից ըստեղծողի յորում սպասէ օրն վերջին:
 Ուխտի մաղթանաց խոնարհեացուք
 երկիր պագեալ նմա, ըզձեռնկալութիւն եւ ըզպար-
 գեւն շաղագաց եւ զաւանդն
 որ զմեզ մտերիմս եւ ոչ երբէք թշնամիս
 եւ ոչ մոլորեալս առ ինքն ձգեաց, միշտ անդադար
 ի միտ ածցուք:

Այլ թարգմանութիւն

Յանուն Աստուծոյ ողորմածի գթածի,
 Գոհութիւն Աստուծոյ տեառն բնաւից,
 ողորմածի գթածի, դատաւորի աւուրն
 դատաստանի:
 Զքեզ աղաչեմք, ի քեզ յուսամք. Առաքեա զմեզ
 ի ճանապարհ
 ուղիղ, ի ճանապարհ այնոցիկ զորս
 բնտրեցեր, եւ ոչ այնոցիկ որոց վերայ
 բարկացեալ ես եւ ոչ անհաւատից:

Այլ թարգմանիչ

Յանուն Աստուծոյ ողորմածի բարերարի
 արհնութիւն Աստուծոյ թագաւորի
 յաւիտենից ողորմածի եւ բարերարի
 թագաւորի աւուրն դատաստանի:
 Ով դուք ամենեքեան ծառայեսցուք նմա
 ստուգիւ օգնեալ եղիցուք:
 Տէր ուղղեա զմեզ ի կէտ ուղիղ, ի կէտ

այնոցիկ ընդ որս հաճեցար առանց բարկութեան
ընդդէմ նոցա, եւ ոչ մոլորեցուք: ⁵⁹

Մեզ անծանոթ թարգմանիչ

Հանուն Աստուծո, բարեբարեգլթոյ ողորմածի,
Օրհնութիւն եղիցի, բարեբարեգլթ եւ ողորմածի
Աստուծոյ,
Թաքաւորին, յաւուր դատաստանին, քեզ
երկրպագանեն,
Ի քէն հայցիմք դօգնութիւն առաջնորդեաց մեզ
ի ճանապարհ ուղիղ,
Ի ճանապարհ այնոցիկ, որոց շնորհս բաշխեցեր,
ընդդեմ որոց ոչ բարկացար եւ ոչ մոլորեալ
եղիցուք: ⁶⁰

Աբրահամ Ամիրխանեանց

Գթած ողորմած Աստուծոյ անունովը

1. Փառք լինի Աստուծուն, աշխարհքների տիրոջը:
2. Գթած ողորմածին:
3. Դատաստանի օրւայ Տիրոջը:
4. Քեզ պաշտում ենք եւ օգնութեան ենք կանչում:
5. Մեզ առաջնորդիր ուղիղ ճանապարհովը:
6. Նրանց ճանապարհովը, որոնց շնորհք ես արել:
7. Ոչ թէ բարկութեան արժանացածների, ոչ էլ
մոլորուածների ճանապարհով: ⁶¹

⁵⁹ Ստեփանոս Լեհացու կողմից ներկայացված վերոհիշյալ թարգմանություններն են՝ ձեռ. 3109:

⁶⁰ ձեռ. 2826:

⁶¹ Ղուրան, թարգմ. Ա. Ամիրխանեանց, Վաղնա, 1909:

Վահագն Դավթյան

1. Հանուն բարեսիրտ, բարեգութ Ալլահի...
2. Փառք տանք Ալլահին՝ աշխարհների տիրոջը...
3. Բարեսրտին ու բարեգութին...
4. Դատաստանի օրվա արքային...
5. Ոոհարհում քո դեմ եւ աղերսում ենք՝
մեզ սատար լինել:
6. Քո ուղիղ ճամփով մեզ առաջնորդիր:
7. Այն ճամփով, որով գնում են նրանք, ով բարո-
թյանդ է արժանի եղել: Ոչ նրանց ճամփով, ովքեր
չարժել են բարկությունը քո եւ մոլորված են:

«Ալ-Բակարա» կոչվող երկրորդ սուրան Ղուրանի հին սուրաններից մեկն է, գրված Մեդինայում, երբ իսլամը նոր-նոր էր կայանում: Ընթերցողը կնկատի, թե ինչպես կտրուկ եւ երբեմն ջղազրգիլ ոճը տեղ-տեղ փոխվում է մեղմ ու համոզիչ ձևի: Հարկավոր չէ ցրիվ, տրամաբանորեն իրար հետ չառնչված քարոզների շարքում փնտրել կուռ կառուցվածք, հետեւողականություն, սյուժե: Ղուրանը Մուհամադի կողմից երկու տասնյակից ավելի տարիների ընթացքում ասված քարոզների հավաքածու է, որ կանոնարկվել է նրա մահից հետո: Այն ճիշտ հասկանալու համար քիչ է անգամ մահմեդական մշակույթի եւ քաղաքակրթության խոր ըմբռնումը: Այստեղ անհրաժեշտ է նաեւ ծանոթություն մեկնողական գրականության հետ, որ բազմաթիվ հեղինակներ եւ հատորներ են կազմում (թափսիր): Ղուրանի աղոթքների, առակների, պատմությունների, սպառնալիքների, օրինակների, հրամանների ետեւում իրականում կան կոնկրետ մարդիկ, իրողություններ, դեպքեր, երկխոսություններ, որոնք պատմության եւ ժամանակի քո-



դով են պատած եւ որոնց խորքի վրա մեր առջեւ այսօր հառնում է միջնադարյան քարոզչի հզոր անհատականությունը:

Գյոթենն, որ Ղուրանը ճանաչում էր լատիներենից կատարված գերմաներեն թարգմանության միջոցով, երկրորդ սուրայի առաջին այաթը, ուր տարանջատվում են ուղիղ ճանապարհով գնացող հավատացյալներն (Մուհամադի հետեւորդները) ու խոտոր ուղու վրա կանգնած բոլոր տեսակի անհավատները, համարում է Մուհամադի գաղափարների թանձրույթ:⁶² Իսլամի 5 սյուներից (աղոթք-սալաթ, նվիրատվություն-զաքաթ, ուխտագնացություն-հաջվ, ծոմ-սաում, միաստվածության բանաձեւ - շահադա) առաջին երկուսն արդեն առկա են. «Նրանց, ովքեր հավատում գաղտնածածուկին, աղոթք են ձոնում եւ այն ամենից, ինչ Ալլահից են շնորհ ստացել, բարեբաշխում են»:⁶³

Ընթերցողը նույնիսկ այդ փոքր հատվածից կկուսհի, որ հենց Ղուրանն ինքն էլ բանավեճ ու հակաճառություն է բնդդեմ հրեաների, Սուրբ գրքի եւ նրա հետեւորդ քրիստոնյաների, կոսպաչտների, երկերեսանիների, ամբարիշտների, խաբերանների եւն: Նույնիսկ վստահ ենք, որ Ղուրանի այս փոքրիկ բեկորում տեսնելով բազմաթիվ ծանոթ աստվածաշնչական թեմաներ, անուններ, մոտիվներ, պերսոնաժներ, դարձվածներ, ընթերցողը միջնադարյան մեր գրիչների նման կտրվի լուսանցքներում նշումներ անելու գայթակղությունը:

Ընթերցողի դատին ենք հանձնում Մուհամադի քարոզների գեղարվեստական թարգմանության այս

⁶² Иоганн Вольфганг Гете, Западно-восточный диван, подгот. И. С. Брагинский, А. В. Михайлов., М., 1988, էջ 164:


⁶³ Ընդգծումը մերն է:

հատվածը, միջնադարյան հայ դպրի այն խոսքերով, որով ավարտվում է Ղուրանի հայոց ձեռագիր թարգմանություններից մեկը.

«Այս ամենը ասվում է ոչ թե արտագրելու եւ սովորելու..., այլ ճիշտ ուղով գնալու համար»:⁶⁴

Իսկ Ղուրանի 109 սուրայի 6-րդ այաթն ազդարարում է.

«Դուք ունեք ձեր կրոնը, եւ ես ունեմ իմ կրոնը»:



⁶⁴ Տե՛ս՝ Զեռ. 3109:

120 ԱՅԼԹ
ԴՈՒՐԱՆԻՅ

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆԻ
ԹԱՐԳԱՆՈՒԹՅԱՄԲ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԻՍՏԻՆԻ

1. Հառա-բարեկեր, բարեգործ Ալլահին...
2. Իմ առաջին համարի աշխատանքները...
3. Բարեկեր, ու բարեգործ...
4. Դաստաստանի օրվա արձանագրություն...
5. Դաստաստանի օրվա արձանագրություն...
6. Քննարկ Հանրի մեջ առաջարկներ:
7. Այս ծանուցումը հանձնվում է Բարեկերի և Բարեգործի անունից:

2.

ԳՐԻՍՏԻՆԻ

- Հառա-բարեկեր, բարեգործ Ալլահին...
1. Դաստաստանի օրվա արձանագրություն...
 2. Դաստաստանի օրվա արձանագրություն...
 3. Դաստաստանի օրվա արձանագրություն...
 4. Դաստաստանի օրվա արձանագրություն...
 5. Դաստաստանի օրվա արձանագրություն...
 6. Դաստաստանի օրվա արձանագրություն...

Վահագն Դավթյանի ձեռագրի առաջին էջը:

ՀԱՅ ԱՐԺԱՆԱԴԱՏԻՎ ԳՐԻՍՏԻՆԻ⁶⁵

1

1. Հանուն բարեկիրտ, բարեգործ Ալլահին...
2. Փառք տանք Ալլահին՝ աշխարհների տիրոջը...
3. Բարեկիրտ ու բարեգործին...
4. Դաստաստանի օրվա արձանագրություն...
5. Խոնարհվում քո դեմ եւ աղերսում ենք՝ մեզ սատար լինել:
6. Քո ուղիղ ճամփով մեզ առաջնորդիր:
7. Այն ճամփով, որով գնում են նրանք, ով բարությունը է արժանի եղել: Ոչ նրանց ճամփով, ովքեր չարժեք են բարկությունը քո եւ մոլորված են:

2

ԿՈՎԸ

- Հանուն բարեկիրտ, բարեգործ Ալլահին...
1. Այս գիրքն, այո, եւ դա կասկածից վեր է, ուղեցույց է Ալլահից երկրորդաճանաչի...


⁶⁵ Ձեռագիրը հրատարակության հանձնվեց որոշ սրբագրումներով: Այսպես խորքային մեկնաբանությունը հատուկ քննության նյութ է եւ դուրս է մեր առջև դրված խնդրի շրջանակից:



2. Նրանց, ովքեր Հավատում գաղտնաձուլին, ազոթք են ձոնում եւ այն ամենից, ինչ Ալլահին են շնորհ ստացել, բարեբաշխում են:
3. Նրանց, ովքեր Հավատում են այն բանին, ինչ ի վերուստ է առաքվել առ քեզ, նաեւ այն բանին, ինչ առաքվել է դրանից առաջ եւ Համոզված են, որ կա Հանդերձյալ:
4. Նրանք Ալլահի շիտակ ճամփին են եւ Հաջողակ են:
5. Իսկ նրանք, ովքեր ամբարիշտներ են, միեւնույնն է, Հորդորել նրանց, թե չես Հորդորել, անհավատներ են:
6. Ալլահը կնքել նրանց սրտերն ու ունկերը նրանց, Հայացքը նրանց քողով է ծածկել, եւ մեծ պատիժ է դա նրանց Համար:
7. Նրանցից ոմանք ասում են, թե մենք Հավատում ենք Ալլահին եւ վերջին օրվան, բայց չեն Հավատում:
8. Նրանք փորձում են խաբել Ալլահին եւ նրանց, ովքեր Հավատավոր են, բայց միայն իրենք իրենց են խաբում եւ սակայն իրենք անգետ են դրան:
9. Նրանց սրտի մեջ ախտն է բուն դրել, եւ թող Ալլահը որպես ստույգի տանջալի պատիժ, ախտն այդ սաստկացնի:
10. Իսկ երբ նրանց ասում են, «Մի տարածեք ամբարիշտությունն աշխարհի վրա», նրանք ասում են. «Մենք միայն բարին արարողներ ենք»:
11. Ինչպե՞ս չէ, նրանք ամբարշտություն տարածողներ են եւ սակայն իրենք անգետ են դրան:
12. Երբ նրանց ասում են. «Հավատացեք, ինչպես սույն մարդիկ են Հավատում, այնժամ այսպես



- են բարբառում նրանք. «Մի՞թե մենք էլ պիտի այնպես Հավատանք, ինչպես Հավատում են սույն Հիմարները», բայց իրականում Հիմարն իրենք են եւ սակայն իրենք անգետ են դրան:
13. Երբ նրանք Հանդիպում են Հավատավորների, ասում են. «Մենք էլ Հավատավոր ենք»: Իսկ երբ մենակ են մնում իրենց չեյթանների Հետ, ապա ասում են. «Մենք ձեզ Հետ ենք, իսկ նրանց ծաղրում ենք»:
14. Ալլահն Հենց ինքը ծաղր ու ծանակի կենթարկի դրանց եւ կսաստկացնի մոլորությունները, որոնց մեջ նրանք կուրորեն դեգերում են:
15. Այդ այն մարդիկ են, ովքեր ճշմարտության փոխարեն սուտն են ընտրել: Նրանց առեւտուրն անշահավետ էր, եւ խոտոր ուղու վրա են նրանք:
16. Նման են նրանք այն մարդուն, որը կրակ է վառել, լուսավորել է շուրջը ամեն ինչ, սակայն Ալլահը տարել է լույսը, նրանց թողել է սեւ խավարի մեջ, եւ նրանք ոչինչ չեն տեսնում արդեն:
17. Կույրեր են նրանք, Համբեր են, խուլեր եւ Հետ չեն դառնա դեպի Ալլահը:
18. Եվ կամ նման են նրանք այն մարդկանց, ովքեր երկնքում ամպրոպաբեր ամպ են տեսնում, որի մեջ խավար, որոտ է, կայծակ, երկյուղ կրելով մեռնել կայծակից, մատներով իրենց ունկերն են խցում, սակայն Ալլահը զանազանում է անարժաններին:
19. Կայծակն Համարյա խլում է նրանց տեսողությունը: Եվ երբ շուտափույթ լուսավորում է, նրանք քայլում են, իսկ երբ Հանգչում է, եւ նրանց վրա մութն է տարածվում, կանգնում են նրանք: Եվ սակայն եթե Ալլահը ուզեր, կխլեր




- նրանց լսողությունն ու տեսողությունը, քանզի Ալլահը ամենագոր է: Մարդիկ, խոնարհվեք ձեր Տիրոջ առաջ եւ երկյուղածեք: Նա է արարել թե ձեզ, թե նրանց, ովքեր եղել են ձեզանից առաջ:
20. Նա է, որ Հոգը գորգ է դարձրել, երկինքը՝ առիք: Եվ նա երկնքից ջուր է վար հեղում ու պտղավորում ձեզ համար սնունդ, եւ դուք դա գիտեք, ուստի թույլ չտաք, որ այլ մի աստծո հավասարեցնենք մեծն Ալլահին:
21. Եթե դուք կասկածում եք այն բանին, ինչ ի վերուստ ենք ընծայարեւել⁶⁶ մենք մեր ծառային, ապա կանչեցեք ձեր վկաններին, բացի Ալլահից, եւ ի ցույց դրեք մի ուրիշ սուրա, որ հավասարվի երկնառաքներին:
22. Եթե դա չանեք, եւ չեք էլ կարող այդ բանը անել, ապա վախեցեք այն կրակից, որի վառելիքը պիտի մարդիկ եւ քարերը լինեն, եւ որի վրա անհավատները հրկիզվեն պիտի:
23. Հավատավորներին եւ բարերարներին բերկրանք պարգեւեք այն ավետիքով, որ այգիներ են սպասում նրանց, որոնց ընդերքով գետեր են հոսում, եւ ամեն անգամ նրանք, երբ իբրեւ վայելք, այդ այգիների պտուղներից ճաշակեն, պիտի ասեն. «Սրանք նույնպիսիք են, ինչով մենք նախկինում ենք սնվել»: Բայց այդ պտուղները նախկինների նմանակներն են միայն: Նրանք այնտեղ մաքուր կանաչ կգտնեն եւ հավերժ կմնան այնտեղ:
24. Ալլահը չի ամաչում ինչ-որ մեղի եւ նրանից ավելի չնչին մի էակի առակի նյութ դարձնել: Հավատավորները գիտեն, որ այդ ճշմարտու-

⁶⁶ Ի Ակաաթի ունի Ղուրանը:



թյունն իրենց Տիրոջից է գալիս, իսկ անհավատներն ասում են՝ ի՞նչ է ուզում ասել այդ առակով: Նա զրանով չատերին մոլորեցնում է, բայց չատերին էլ ուղիղ ճանապարհով է տանում: Միայն անպիտաններին է նա զրանով մոլորեցնում:

25. Նրանք, ովքեր Ալլահի հետ ուխտ կապելուց հետո խախտում են այդ ուխտը, այն, ինչ Ալլահը պատգամել է միացնել՝ բաժանում են եւ ամբարշտություն են անում աշխարհի վրա, ապերժանիկ են:
26. Ինչպե՞ս եք դուք անհավատ մնում Ալլահի առաջ: Մեռյալ էիք դուք, եւ նա կենդանացրեց ձեզ: Ժամանակ անց նա նորից կմահացնի ձեզ եւ նորից կկենդանացնի, եւ դուք կվերադառնաք դեպի Ալլահը:
27. Աշխարհի վրա նա է արարել ամենայն ինչ, հետո բարձրացել է երկինք եւ յոթ երկինք է ստեղծել այնտեղ: Նա Ամենագետ է:
28. Ահա քո տերն ասաց Հրեշտակներին. ես երկրի վրա տեղապահ կլծողնեմ, Հրեշտակներն ասացին. «Մի՞թե կլծողնես այնպիսի մեկին, որն ամբարշտություններ կանի եւ արյուն կհեղի աշխարհի վրա, այն ղեպքում, երբ մենք փառաբանում, սրբացնում ենք Քեզ»: Եվ Ալլահն ասաց. ես գիտեմ այն, ինչ չգիտեք դուք:
29. Եվ նա Աղամին սովորեցրեց բոլոր անունները, հետո անուններն այդ նա հաղորդեց Հրեշտակներին եւ ասաց նրանց. ազդարարեցեք ինձ սույն անունները, եթե դուք արդարացի եք:
30. Նրանք ասացին. «Փառք քեզ: Մենք գիտենք միայն այն, ինչ որ դու ես ուսուցել: Հիրավի դու գիտուն ես, իմաստուն»:



31. Նա ասաց. «Աղամ, Հաղորդիր նրանց իրենց անունները»: Եվ երբ Աղամը Հաղորդեց նրանց իրենց անունները, Ալլահն ասաց. «Մի՞թե ես չէի ասում, որ գիտեմ երկնքում ու երկրի վրա թաքնվածը եւ գիտեմ այն, ինչ դուք բացահայտում եք, եւ այն, ինչ թաքցնում եք»:⁶⁷
32. Եվ ահա մենք ասացինք Հրեշտակներին. «Ուռնարհվեցեք Աղամին», եւ խոնարհվեցին նրանք, Իրլիսից բացի: Նա Հրաժարվեց եւ գոռոզացավ եւ Հայտնի դարձավ, որ անհավատ է:⁶⁸
33. Մենք ասացինք. «Աղամ, բնակվիր կնոջդ Հետ զրախտում եւ ի վայելումն կերեք այնտեղ, ինչ որ կամենաք, բայց չմոտենաք այս ծառին, որպեսզի Հանցագործ չդառնաք:
34. Դրանից Հետո սատանան սայթաքեցրեց նրանց եւ դուրս բերեց այնտեղից, ուր բնակվում էին: Եվ մենք ասացինք. Տապալվեցեք, դուք մեկմեկու թշնամի եք, ձեր մշտական բնակավայրը երկիրն է եւ այնտեղ են ձեր կենսական պահանջմունքները:
35. Աղամն ընդունեց խոսքն իր տիրոջ, որը խղճաց նրան, քանզի նա բարեգութ եւ բարեսիրտ է զղջացողների Հանդեպ:
36. Մենք ասացինք. շուտ եկեք սատանայից լիովին այնպես, ինչպես Հիմա եք: Ինձանից ձեզ ուղեցույց կգա: Նրանք, ովքեր կՀետեւեն իմ Հորդորներին, ահ չեն ունենա ու չեն մնա տրտմության մեջ:
37. Իսկ նրանք, ովքեր չեն Հավատա իմ նախան-


⁶⁷ Աստված տվեց իրերի եւ առարկաների անունները:

⁶⁸ Իրլիսը հայտնի է որպես ընդվզող եւ մարդուն չենթարկվող: Անհավատ շեյթանները ենթարկվում են Իրլիսին:



- չաններին, կրակի բնակիչներ կդառնան եւ կմնան այնտեղ:
38. Իսրայելի ղավակներ, Հիշեք իմ բարերարությունները, որ ես շնորհեցի ձեզ, Հավատարիմ եղեք ինձ Հետ կնքած ձեր ուխտին, եւ ես էլ Հավատարիմ կլինեմ այդ ուխտին: Վախեցեք ինձանից, ինձանից վախեցեք: Հավատացեք վերուստ իմ առաքածին ի Հաստատումն այն բանի ճշմարտության, ինչ ձեզ մոտ է. սույն Գիրքը մերժողներից առաջինը չլինեք: Իմ նշանակների փոխարեն ոչ մի ցածրարժեք բան չվերցնեք, պատկառեք ինձանից, ինձանից պատկառեք:
39. Ճշմարտությունը մի քողարկեք ստի Հանդերձով: Մի թաքցրեք ճշմարտությունը, երբ գիտեք այն:⁶⁹
40. Աղոթեցեք, շնորհեցեք մաքրագործող ողորմածությունը, խոնարհվեցեք խոնարհվողների Հետ:
41. Մի՞թե դուք այդ մարդկանց մատնացույց անելով բարին, կմոռանաք ինքներդ ձեզ, այն դեպքում, երբ կարդում եք Սուրբ գրությունը, մի՞թե չեք դիմի ձեր դատողությանը:
42. Օգնության կանչեցեք Համբերությունը եւ աղոթքը, դրանք Հիրավի մեծ ուժ են միայն խոնարհների Համար:
43. Նրանց Համար, ովքեր մտածում են, որ կՀանդիպեն իրենց Տիրոջը եւ կվերադառնան դեպի նա:
44. Իսրայելի ղավակներ, Հիշեք իմ բարերարու-

⁶⁹ Վերաբերում է քրիստոնյաներին. որոնք իբրեւ թե ժողովրդից թաքցնում են Աստվածաշնչի այն հատվածները, որտեղ խոսվում է Մուհամադի մասին: Հմմտ.՝ М.-Н. О. Османов, Гзл. աշխ.:



Թյունները, որ չնորհեցի ձեզ եւ բարձրացրեցի բոլորից վեր:

45. ⁷⁰

46. Ահա մենք փրկեցինք ձեզ Փարավոնի ժողովրդից, նա ձեզ մատնեց դաժան տառապանքների, զոհելով ձեր որդիներին եւ թողնելով միայն ձեր դուստրերին: Դրա մեջ ձեր աստծո մեծ գայթակղությունը կար:

47. Ահա մենք ձեզ համար կիսեցինք ծովը, մենք փրկեցինք ձեզ, իսկ Փարավոնի ժողովրդին ձեր աչքերի առաջ խեղդեցինք:

48. Մենք չորս տասնյակ զիշեր անցկացրինք Մովսեսի հետ, իսկ դուք նրա բացակայութեամբ, ձեզ համար հորթ ստեղծեցիք, համառորեն ամբարիշտ մնալով:

49. Դրանից հետո մենք դա ներեցինք ձեզ, ենթադրելով, որ չնորհակալ կլինեք:

50. Եվ ահա մենք Մովսեսին Սուրբ գրութեան տարբերակ տվեցինք՝ խորհելով, որ գուցե դուք կգնաք ուղիղ ճանապարհով:

51. Եվ ահա Մովսեսը ասաց ժողովրդին. «Ժողովուրդ իմ, մենք ինքներս մեզ չարիք արեցինք նրանով, որ մեզ համար հորթ ստեղծեցինք. այդ պատճառով զղջումով դիմեցեք ձեզ արարողին կամ սպանեցեք ինքներդ ձեզ, դա ձեզ համար ավելի լավ կլինի, արարիչը կխղճա զղջացողներին, քանի որ նա բարեմիտ եւ բարեսիրտ է զղջացողների հանդեպ»:

52. Ահա դուք ասացիք Մովսեսին. «Մովսես, մենք չենք հավատա քեզ, մինչև մեր դիմաց բացահայտորեն չենք տեսնի Ալլահին»: Դրա համար

այն ժամանակ, երբ դուք ուզեցիք տեսնել Ալլահին, կայծակը հարվածեց ձեզ:

53. Ապա ձեր մահից հետո հարություն տվինք ձեզ, ենթադրելով, որ դուք չնորհակալ կլինեք:

54. Մենք ամպը հովանի արինք ձեզ, մանաւանդ եւ լորեր ուղարկեցինք, որ սնվեք այն բարիքներով, ինչ մենք բաժին ենք հանել ձեզ: Նրանք ոչ թե մեզ, այլ իրենք իրենց էին վիրավորել:


55. Ահա մենք ասացինք. մտեք այս քաղաքը, առատորեն սնվեցեք այնտեղ ինչով կուզեք, մտեք նրա դարպասներով, ծնրադրեք եւ քափութեան խոսքեր ասեք: Մենք կներենք ձեր զանցանքները եւ կմեծարենք բարեգործներին:

56. Բայց օրինադանցները նրանց ասված խոսքը փոխեցին այլ խոսքով: Այդ ժամանակ մենք երկնքից մահ առաքեցինք այդ օրինադանցներին, քանի որ նրանք ամբարշտություններ տարածողներ էին:

57. Երբ Մովսեսը խմելիք խնդրեց իր ժողովրդի համար, մենք ասացինք. «Բո գավազանով զարկ ժայռին»: Եվ տասներկու աղբյուրներ հոսեցին նրանից, եւ բոլոր մարդիկ խմացան այն տեղը, որտեղից խմեն: Խմեցեք, կերեք Ալլահի պարգևներից, չարիք մի գործեք, երկրի վրա տարածելով ամբարշտություն:

58. Եվ ահա դուք ասացիք. «Մովսես, չի կարելի բավարարվել մեկ եւ նույն սնունդով, մեր փոխարեն քո Ալլահից խնդրիր, որ նա մեզ տա այն, ինչ աճեցնում է հողը՝ բանջարեղեն, վարունգ, սխտոր, ոսպ, սոխ»: Նա ասաց. «Մի՞թե ուզում եք լավագույնի փոխարեն վատագույնը վերցնել: Իջեք եզիպտոս: Զեզ համար այնտեղ կա այն, ինչ խնդրում եք: Ստորացումը եւ աղ-

⁷⁰ վ. Դավթյանը այս ալաթը չի թարգմանել:



քատութիւնը բաժին ընկան նրանց, եւ նրանք Ալլահի զայրույթը Հանեցին իրենց դեմ, այն բանի համար, որ մերժեցին Ալլահի նշանակները եւ անարդարացիորեն սպանում էին մարգարեներին, քանի որ նրանք անհնազանդ էին, եւ գործում էին ինքնակամ:

59. Հիրավի, հավատավորներին, հուղայացողներին, նազովրեցիներին ու սաբեացիներին, ովքեր հավատում են Ալլահին, դատաստանի օրվան, բարերարում են. նրանք իրենց Ալլահի պարգևին են արժանի, նրանք սարսափ չեն տեսնի, չեն մնա տրտմութեան մեջ:
60. Մի ժամանակ մենք ձեզ հետ ուխտ կապեցինք եւ ձեզ վրա լեառ բարձրացրինք. «Ամուր պահպանեցեք այն, ինչ մենք տվինք ձեզ: Հիշեցեք, զրանով գուցե դուք աստվածավախ դառնաք»:
61. Իսկ դուք դրանից հետո երես թեքեցիք: Եթե չլինեին Ալլահի բարութիւնն ու ողորմածութիւնը ձեր նկատմամբ, ապա դուք կզոհախտանայիք: Դուք գիտեք ձեզանից նրանց, ովքեր ինքնակամ վարվեցին չարաթ օրը, այդ պատճառով մենք ասացինք նրանց. «Կապիկներ դարձեք եւ գնացեք մարդկանցից հեռու»:⁷¹
62. Դրանով մենք նախազգուշութեան օրինակ տվինք նրանց ժամանակակիցներին ու սերունդներին եւ խրատ՝ բարեպաշտներին:
63. Մի ժամանակ Մովսեսն ասաց իր ժողովրդին.

⁷¹ Այս այսքն ունի տարբեր մեկնաբանություններ: Բոլոր դեպքերում արտացոլում է շարքա օրը աշխատելու արգելքը: Վերագրվում է Աստվածաշնչական արձագանք՝ Ելից ԺԶ:23, Ի:8-11:



«Ալլահը հրամայում է ձեզ կով զոհաբերել»:
Նրանք ասացին. «Որեւէ ծաղր ես ուզում անել ձեզ վրա»:

Նա ասաց. «Թող պահպանի ինձ Ալլահը, որպեսզի ես անմիտների թվում չհայտնվեմ»:

Նրանք ասացին. «Մեր փոխարեն աղոթիր քո Տիրոջը, որ նա մեզ ցույց տա այդ կովը»: Մովսեսն ասաց. «Նա ասում է ձեր կով չէ եւ ոչ էլ հորթ, միջին տարիքի է: Արեք այն, ինչ հրամայվում է ձեզ»:

64. Նրանք ասացին. «Մեր փոխարեն աղոթիր քո Տիրոջը, որ նա ցույց տա մեզ, թե ի՞նչ գույնի է»: Մովսեսն ասաց. «Նա ասում է, որ այդ կովը չեկ է, նրա գույնը չիկաղեղին է եւ դուր է գալիս նայողներին»:
65. Նրանք ասացին. «Աղոթիր մեր փոխարեն քո Տիրոջը, որպեսզի նա ցույց տա մեզ, թե ո՞րն է այն, քանի որ մենք մեկը մյուսի նման կովեր ունենք: Այդ դեպքում, եթե Ալլահին օգտակար լինի, մենք դա կկատարենք անսխալ»:
66. Մովսեսն ասաց. «Տերն ասում է՝ դա կով է, որ Հյուժված չէ ո՛չ հող հերկելուց եւ ո՛չ արտեր ոռոգելուց, պահպանվել է անմնաս, իր վրա չունի այլ գույնի խայտարղետություն»:
Նրանք ասացին. «Արդ դու ցույց տվիր մեզ ճշգրիտ նշաններ»:
- Այդ ժամանակ նրանք կովը զոհաբերեցին, թեեւ պատրաստ էին դա չկատարել:
67. Եվ ահա, դուք սպանեցիք մարդ եւ վիճելով միմյանց հետ, այդ բանում մեղադրեցիք մեկը մյուսին. բայց Ալլահը հայտնաբերեց ինչ դուք թաքցնում էիք:
68. Դուք ասացիք. «Ուրիշներ նրան նրա որեւէ մա-




սով»։ Եվ եղավ այնպես, ինչպես կլինի, երբ Ալլահը կենդանացնի մեռյալներին և ձեզ ցույց կտա իր նշանակները. գուցե դուք կզատնաք խելամիտ։⁷²

69. Դրանից հետո ձեր սրտերը դաժանացան և իրենց դաժանությունը ժայռերից ավելի դաժան դարձան, քանի որ ժայռերը երբեմն իրենց խորքից աղբյուրներ են հանում և նրանք երբեմն նստվածք են տալիս, և նրանց միջից ջուր է հորդում և նրանք նույնիսկ Ալլահի ահից տապալվում են։ Ալլահն անուշաղիր չի մնում ձեր գործերի հանդեպ։
70. Ցանկանում եք դուք, որ նրանք հավատավոր լինեն ինչպես և դուք։ Նրանցից ոմանք արդեն լսել էին Ալլահի խոսքը և անհավատարիմ եղան այն բանից հետո, երբ հասկացան նրան, և նրանք այդ գիտեն։
71. Երբ հավատավորների են հանդիպում, ապա ասում են. «Մենք հավատում ենք», երբ ուրիշների հետ մենակ են մնում, այդ ժամանակ ասում են. «Վերապատմեցեք այն, ինչ Ալլահը բացահայտեց ձեզ»։ որպեսզի նրանք ձեր Տիրոջ առաջ ներկայացնեն զրա ապացույցները։ Հասկանում եք արդյոք դուք դա։
72. Մի՞թե նրանք չգիտեն, որ Ալլահը գիտե և այն, ինչ նրանք թաքցնում են, և այն, ինչ բացահայտում են։
73. Նրանց մեջ կան տղետներ, ովքեր ոչ թե Սուրբ

⁷² Մեծահարուստ մի իսրայելցու սպանության արձագանքն է։ Երբ Մուհամադի մոտ բերեցին կապկածյալին, իսկ վկաներ չկային, Աստված հրամայեց կով մորթել և նրա մի մասը (լեզուն) դիպցնել հանգուցյալին։ Վերջինս կենդանացավ, ասաց իրեն սպանողի անունը և մահացավ։ Հմմտ.՝ Լարենց, 624, աշխ.։

գիրքը գիտեն, այլ միայն հնարանքներ, նրանք միայն կարծիքներ ունեն։ Վա՛յ նրանց, ովքեր սեփական ձեռքերով արտագրելով Գիրքը՝ ասում են. «Սա Ալլահից է», որպեսզի զրա դիմաց ստանան որեւէ չնչին վարձատրություն։ Վա՛յ նրանց, որ նրանց ձեռքերը գրում են, վա՛յ նրանց այն բանի համար, ինչ ձեռք են բերում նրանք։

74. Նրանք ասում են. «Կրակը մեզ կդիպչի միայն որոշակի օրերի»։ Ասա նրանց, ի՞նչ է՝ պայմանագիր եք կնքել Ալլահի հետ և Ալլահը չի՞ փոխի այդ պայմանագիրը։ Կամ Ալլահի մասին չե՞ք ասում այնպիսի բաներ, ինչ ինքներդ չգիտեք։
75. Այո, նրանք ովքեր յուրացրել են չարիքը, որոնց համակել է սարսափը, նրանք կրակի բնակիչներ կդառնան և կդառնան ոչինչ։
76. Բայց նրանք, ովքեր հավատում էին և բարիք գործում, զրախտի բնակիչներ կդառնան և հավիտյան կմնան այնտեղ։
77. Մի ժամանակ մենք պատգամեցինք Իսրայելի որդիներին՝ պաշտեցեք միայն Ալլահին, բարիք կատարելով ձեր ծնողներին, որբերին, աղքատներին, մարդկանց բարին ասացեք, աղոթեցեք, մաքրագործող ողորմածություն տվեք, բայց դուք, բացառությամբ քչերի, հետ դարձաք, դուք նահանջեցիք։
78. Ահա մենք ձեզ պատգամում ենք՝ մի հեղեղեք միմյանց արյուն, մի վտարեք մեկ մեկու իրենց կացարաններից և դուք խոստովանելով՝ դա հաստատեցիք։
79. Բայց զրանից հետո դուք հանդես եկաք իրրև մեկ մեկու սպանողներ, ձեզանից ոմանց դուրս



արեցիք իրենց կացարաններից, մեկդ մյուսին օգնեցիք թշնամանքի եւ ճնշումների մեջ, երբ ձեզ մոտ գերիներ էին գալիս, փրկագնում էիք նրանց այն դեպքում, երբ օրենքը արգելում էր ձեզ վտարել նրանց: Մի՞թե դուք սուրբ Գրություն մի մասին հավատում եք, իսկ նրա մյուս մասը՝ մերժում: Ձեզանից նրանք, ովքեր այդպես են վարվում, իրական կյանքում հատուցումը միայն անփառունակությունը կլինի, իսկ հարություն օրը նրանք կմատնվեն ամենադժան տառապանքների: Այլա՞հր ձեր գործերի նկատմամբ անուշադիր չի մնում:

80. Նրանց համար, ովքեր ապագա կյանքը կփոխեն ներկայով, այդ տառապանքները չեն թուլանա, եւ նրանցից չեն ազատվի:
81. Մենք արդեն Մովսեսին տվինք սուրբ Գրություն, հրամայեցինք նրան հետեւել ուրիշ առաքյալների, հետո Հիսուսին՝ Մարիամի որդուն, պարզ ցուցումներ տվինք եւ սուրբ Հոգով զորացրինք նրան, իսկ դուք, ամեն անգամ, երբ որեւէ առաքյալ ինչ-որ բան էր բերում ձեզ, որը չէր քծնում ձեր կրքերին, ծանակում էիք նրան, ոմանց համարում էիք ստախոսներ, այլոց անգամ սպանում էիք:
82. Նրանք ասում են. «Մեր սրտերը թլպատված չեն»: Այլա՞հն անիծեց նրանց իրենց համառության համար:
83. Երբ Այլահից նրանց սուրբ Գրություն է գալիս, որը հաստատում է իրենց մոտ եղածը, սկզբում նրանք ուզում էին հաղթել նրանց, ովքեր անհավատ էին, երբ գալիս է մի այնպիսի բան, որն իրենք գիտեին, չեն հավատում դրան: Թող Այլահի անեծքը դիպչի անհավատներին:



84. Որքան չնչին է այն բանի գինը, ինչ իրենք իրենց են ծախում: Մերժելով Այլահի հայտնությունը ասում են. «Պատմեցեք այն, ինչ Այլահը բացահայտեց ձեզ». որպեսզի նրանք ձեր Այլահի առաջ ցուցադրեն այդ բանի ապացույցները: Մի՞թե դուք չեք հասկանում դա:


85. Երբ նրանց ասում են ինչ Այլահն է առաքում, նրանք ասում են. «Մենք հավատում ենք միայն նրան, ինչ մեզ է առաքվել»: Նրանք մերժում են այն, ինչ հետո է եղել, այն դեպքում, երբ դա ճշմարտություն է, որ հաստատում է իրենց մոտ եղածը: Ասացեք, ինչո՞ւ էիք դուք սպանում աստծո առաքյալներին, եթե հավատացյալներ էիք:

86. Մովսեսը ձեզ մոտ էր գալիս պարզ ցուցումներով, իսկ դուք նրա բացակայությամբ հորթ սարքեցիք՝ լինելով համառ ամբարիչտներ:

87. Ահա մենք ուխտի մեջ մտանք ձեզ հետ, լյառ բարձրացրինք ձեզ վրա: «Հաստատապես պահպանեցեք ինչ մենք տվեցինք Ձեզ եւ հնազանդ եղեք»: Նրանք ասացին. Մենք լսում ենք եւ չենք հնազանդվում: Նրանք իրենց անհավատությամբ, իրենց սրտով նվիրարեցրեցին հորթին, ասացեք, որքան չնչին է այն, որ նրանց հավատ է ներչնչել, եթե նրանք հավատացյալներ են եղել:

88. Ասացեք, եթե Այլահի առաջ ձեր ապագա կացարանը պատկանում է մեծավ մասամբ ձեզ՝ բացառությամբ սույն մարդկանց, ապա մահ ցանկացեք, եթե ճշմարտությունն էր ասում:

89. Բայց նրանք երբեք դա չեն ցանկանում, այն պատճառով, ինչ կատարել են նրանց ձեռքերը դրանից առաջ: Այլահը գիտե, որ նրանք ամրա-



րիչտներ են:

90. Եվ իսկապես, նրանք բոլոր մարդկանցից ավելի կյանքի ծարավ են: Նրանցից յուրաքանչյուրը, ինչպես եւ բազմաստվածներից ամեն մեկը, կցանկանար ապրել 1000 տարի, բայց կյանքը չազատել երկարակեցության տառապանքներից: Այլա՜հր տեսնում է, թե ինչ են անում նրանք:
91. Ասա նրանց, ովքեր Գարրիելի թշնամիներն են դարձել՝ նա Այլա՜հի կամքով իջնցրել է քո սրտի վրա ի Հաստատումն այն բանի, ինչ եղել է նրանից առաջ, որպես ցուցում եւ ավետիք Հավատացյալների:
92. Նրանց, ովքեր դարձան Այլա՜հի, նրա Հրեշտակների, առաքյալների՝ Գարրիելի եւ Միքայելի թշնամիները, նրանց՝ անհավատներին, Այլա՜հը թշնամի դարձավ:
93. Մենք ձեզ Հստակ նախանշանակներ առաքեցինք եւ միայն, այլասերվածները չեն Հավատում նրանց:
94. Ամեն անգամ, երբ նրանք պարտավորվում էին որեւէ պարտականության, մի՞թե նրանցից ոմանք դա չէին վանում իրենցից: Իսկապես նրանցից շատերը չեն Հավատում:
95. Երբ նրանց մոտ Այլա՜հի առաքյալներից որեւէ մեկն էր գալիս Հաստատելու այն, ապա նրանցից ոմանք, որոնց տրված է եղել սուրբ Գրությունը, զգում էին իրենց մեջքի Հետեւ, իբր թե չեն ճանաչում այն:
96. Այլ Հետեւում էին այն բանին, ինչ Հնարում էին դուրը Սողոմոնի թագավորության ժամանակ: Բայց Սողոմոնը անհավատացյալ չէր, անհավատացյալ էին դուրը: Նրանք մարդկանց սո-

վորեցնում էին այն կախարդությունները, ինչ Բաբելոնում առաքված էին երկու Հրեշտակներին՝ Հարութին եւ Մարութին: Բայց սույն երկուսը ոչ մեկին չէին ուսուցանում, ասելով. «Մենք գայթակղիչներ ենք, այդ պատճառով անհավատ մի եղեք»: Նրանցից սովորեցին, թե ինչպես ամուսնուն բաժանեն կնոջից, նաեւ այն, ինչով էին նրանք որեւէ մեկին վնաս պատճառում, եւ դա կատարվում էր միայն Այլա՜հի թույլտվությամբ: Նրանք սովորեցին այն բանին, ինչ վնաս էր բերում իրենց եւ օգուտ չէր բերում եւ գիտեին, որ ով այդպիսի ձեռքբերում է կատարել, նա ապագա կյանքում չի արժանանա երանության բաժնին: Եվ իսկապես, որքան չնչին է այն, որի դիմաց նրանք ծախում էին իրենք իրենց: Մ, եթե նրանք իմանային դա:⁷³

97. Մ, եթե նրանք Հավատային եւ դառնային արժանապատիվ մարդիկ: Հիրավի Այլա՜հի պարգևը լավագույն երանությունն է: Մ, եթե նրանք գիտականք լինեին:
98. Հավատացյալներ, մի ասեք ուրիշ. «Փրկիր մեզ», այլ ասեք. ունգուռնա «նայիր մեզ վրա». եղեք Հնազանդ, անհավատները կարժանանան սոսկալի տանջանքի:
99. Անհավատներից նրանք, ովքեր գիտեն սուրբ Գրությունը եւ բազմաստվածները, չեն ցան-

⁷³ Իբրեւ թե սատանաները կախարդական գրքեր էին գրել եւ թաղել Սողոմոնի գահի տակ: Նրա մահից հետո դրանք ներկայացնում եւ վաճառում էին որպես նրա գեղեցիկ ուժի ապացույց: Հմտ.՝ Լաբեց, Աշվ. աշխ.: Հարություն եւ Մարություն չար վարքի պատճառով վտարվել են երկնից եւ տաճարում են Բաբելոնի շրճորներից մեկում:




կանում, որպեսզի Ձեր Ալլահից Ձեզ վրա որեւէ բարիք իջնի. բայց Ալլահը ողորմածութիւն է տալիս ում ցանկանում է: Ալլահը տիրակալն է մեծ շոայլութիւններին:

100. Երբ մենք փոխում ենք որեւէ նախանշանակ, կամ հրամայում ենք մոռանալ այն, ապա մենք տալիս ենք նորը, նրանից լավը, կամ՝ նրան հավասարը:⁷⁴ Չգիտե՞ս, որ Ալլահը բազմազոր է:
101. Չգիտե՞ս միթե, որ թե երկնքում եւ թե երկրի վրա նրանն է արքայական իշխանութիւնը, եւ Ալլահից բացի մենք չունենք այլ հովանավոր եւ պաշտպան:
102. Կցանկանա՞ք արդյոք դուք առաքյալից նույնպիսի պահանջներ անել, ինչպիսիք արվում էին առաջ Մովսեսից: Նա, ով հավատք փոխում է անհավատութեան հետ, խոտորվում է ուղիղ ճանապարհից:
103. Սուրբ Գրութիւնն իմացողներից չատերը այն ատելութիւնից, ինչպիսին իրենց հոգու մեջ է, այն բանից հետո, երբ դուք հավատավոր դարձաք, երբ նրանց պարզ ցույց տրվեց, թե որն է ճշմարտութիւնը, ցանկանում են ձեզ նորից անհավատ դարձնել: Նրանց ներեցեք, հեռացեք նրանցից, մինչեւ որ Ալլահը չի կատարի իր գործը: Ալլահն ամենազոր է:
104. Աղոթեցեք, շնորհեցեք սրբազործող ողորմածութիւն, ինչ բարիք որ նախապես անեք ձեր հոգու համար, այն Ալլահի մոտ կգտնեք: Քանզի Ալլահը տեսնում է, թե ինչ եք անում դուք:
105. Նրանք ասում են. «Դրախտ կմտնի միայն նա,

ով կամ հրեա կլինի, կամ նազովրեցի»:⁷⁵ Դա նրանց տենչանքներն են: Այդպիսիներին ասա. ցույց տվեք ձեր ապացույցները, եթե դուք իրավացի եք:

106. Ընդհակառակը, ով Ալլահին հնազանդ կլինի, բարութիւն գործելով, նա կարժանանա Ալլահի պարգևին, նա սարսափի չի ենթարկվի եւ չի ապրի տրտմութեան մեջ:
107. Հրեաներն ասում են. «Նազովրեցիները խոտոր ուղու վրա են»:⁷⁶ «Նազովրեցիներն ասում են. «Հրեաներն անհիմն են» եւ թե մեկը, եւ թե մյուսը, սուրբ Գրութիւնն են կարդում: Նման բաներ են ասում եւ անգետները: Հարութեան օրը Ալլահը կքննի այն, ինչի մեջ տարաձայն են նրանք:
108. Կա՞ն արդյոք նրանցից ավելի ամբարիշտները, ովքեր արգելում են իր տաճարներում դիմել Ալլահին եւ ձգտում են խորտակել դրանք: Նրանք պարտավոր են միայն երկյուղածութեամբ մտնել այդ տաճարները: Այս կյանքում նրանք կապրեն անփառունակ, իսկ ապագա կյանքում նրանց վիթխարի տանջանք է սպասվում:
109. Չէ՞ որ ե՛ւ արեւելքում, ե՛ւ արեւմուտքում, ուր էլ դիմեք դուք, ամենուրեք Ալլահի դեմքն է, որովհետեւ Ալլահը համապարփակ է, ամենագետ:
110. Նրանք ասում են. «Ալլահը զավակներ ունի»:⁷⁷ Մաքրամաքուր է նա, փառք տվեք նրան, հիրավի, նրան է պատկանում ամեն ինչ ե՛ւ երկնքում ե՛ւ երկրի վրա եւ ամեն ինչ հնազանդ է նրան:
111. Նա է եւ երկնքի, եւ երկրի կենսապարգելը, եւ երբ նախորդի, թե ինչ է լինելու, միայն կասի. «Եղիցի»:⁷⁸ Եվ նա կեցութիւն կստանա:

⁷⁴ Տեղի տալով իրադրությանը, Մուհամադը երբեմն ստիպված է եղել փոխել իր քարոզի բովանդակությունը:



112. Անգետներն ասում են. «Ինչո՞ւ Ալլահը չի խոսում մեզ հետ, կամ չի գալիս որեւէ նախանշանակով»: Այդպիսի բաներ ասում էին նաեւ նրանց նախորդները: Նրանք իրենց սրտերով համատեղ են. Մենք արդեն ցույց ենք տվել նախանշանակները այն մարդկանց, որոնք ունեն ճշմարիտ գիտելիքներ:
113. Հիրավի, մենք ուղարկել ենք ավետիք բերող, եւ դու պատասխանատու չես դեպի գեհնական բոցը գնացողների համար:
114. Ոչ հրեաները եւ ոչ էլ նազովրեցիները զոհ չեն լինի, մինչեւ չընդունես նրանց կրոնը: Ասա. «Միայն Ալլահի ցուցումներն են ճշմարիտ դեկավարութուն»: Եվ եթե հետեւես հրեաների եւ նազովրեցիների ցանկություններին այն բանից հետո, երբ քեզ գիտելիքներ են տրված, Ալլահը ոչ կպաշտպանի քեզ եւ ոչ էլ կօգնի:



АРМЯНЕ И КОРАН

Армануш Козмоян

РЕЗЮМЕ

Знакомство армян с исламом начинается с сообщения историка VII века Себеоса о Мухаммеде. С одной стороны, он констатирует исторический факт, с другой – подчеркивает индифферентное отношение к исламу, что связано с идентичностью христианских и исламских монотеистических идей, а также выраженной толерантностью к иноверцам на заре ислама. Ряд армянских историков проявляют тонкую осведомленность в коранических терминах и сурах, из чего можно заключить, что апологеты христианства стремились обосновать свои взгляды на подлинных источниках. Можно предположить, что авторы или знали арабский текст, или были знакомы с выполненным к этому времени армянским переводом (возможно, в отрывках). Рукопись № 3109 Матенадарана имени Маштоца представляет перевод Корана, выполненный Степаносом Лехаци (XVII век) с латинского языка. Перевод содержит 124 суры вместо 114, которые автор именует «Азоара». Расхождение в количестве сур с арабским оригиналом и транскрипция в форме «Азоара», а также, отсутствие транскрибированных на армянский язык арабских заглавий сур и их переводов, идут от латинского первого перевода (Кеттонского). Начало перевода Степаноса Лехаци гласит: «Это книга законов агарян или исмаильтян, именуемая «Коран», т.е. сборник заповедей» и включает: «В конце Корана есть несколько стихов, не переведенных на язык латинян, не знаю, почему». Не означает ли это замечание, что пишущий имел под рукой




оригинал, или другой перевод, с которым сверял свой текст! Перевод Лехацы завершается словами: «Окончен перевод Корана, с латинского языка на армянский, выполненный рукою любослова Степаноса Лехацы».

Армянский текст Корана Лехацы начинает с трех вариантов фатиха. Один из них – его перевод, следующий представлен под заглавием «Другой перевод», при этом не ясно, это вариант, сделанный им же, или же работа другого переводчика. А третий вариант дан под заглавием «Другой переводчик». Значит ли это, что Лехацы знал другого переводчика этого текста на армянский язык?

Рукопись №2826 датированная XVIII веком, представляет другой перевод Корана, отличающийся от рассмотренного выше перевода, как по стилю, так и по структуре. Он завершается 104 сурой «Слон», которая соответствует 105 суре арабского оригинала. Такое расхождение – следствие того, что переводчик не учел первую суру.

Многочисленные маргинальные заметки отражают теологические разногласия и опровержения, но ни в коей мере толкования. В рукописях перевода Корана встречаются также связанные с исламом разные тексты: «Договор Махмеда с армянами», «Учение Махмеда», «Видение Махмеда», «Опровержение речей корана», «История пришествия Махмеда к армянам» и т.д. В основном, это рассказы соответствующих отрывков из сочинений армянских историков, преломленные в художественном и образном видении рассказчиков. Исследование рукописей показало, что в армянской среде применялась также практика свободного пересказа пассажей из Корана.

Вышеназванные рукописи никогда не были изданы. Однако, существует несколько изданных полных переводов Корана на армянский язык, выполненных с арабского и французского языков (вышедшие в 1909-12гг. за пределами Армении), а так же, переводы фрагментов, сделанных с русского языка.



Ա. ԿՈԶՄՈՅԱՆ

ՂՈՒՐԱՆԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ

A. КОЗМОЯН

АРМЯНЕ И КОРАН

ՄՈՒՂՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ՝ Վ. ԳԱԼԼԱՔՅԱՆԻ
ՏՊԱԳՐՎԱԾ Է ԳԱՍՊՐԻՆՑ ՏՊԱԳՐԱՏԱՆԸ
ԵՐԵՎԱՆ - 2003